Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

11560
11561

891.99
4-14

Ի ՅԻՇԱՏԱԿ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

Ի ՅԻՇԱՏԱԿ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ
38

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՑԻ

# „ԱՇԸՂ ՋԻՒԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ“

*« Երգը մի տեսակ զանգակ է, որ Թմրածներին զարթեցնում է, և մարդու միտքն ու հոգին գրաւում դէպ երան . . . . . »:*

Ալ. Միւէթար.

Հրատարակեց

ԳԷՈՐԳ Կ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ՏՓԽԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ:
1888

2744

Дозволено цензурою Тифлисъ, 29 Апрѣля 1888 года.

20.13

Типографія М. Д. Ротиніанца на Голов. прос. соб. домъ № 41.

# ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Ձեր առաջն է գալիս սիրելի՛ք, մի ժողովրդական երգչի զանազան բանաստեղծութիւնները. մի երգչի՛ որ բոլորովին գրել, կարդալ չը գիտէ, այլ Աստուածային բնատուր գեղեցիկ ձիրքով նուիրուել է ժողովրդական երգչութեան—բանաստեղծութիւններ հիւսելով. որո՛ւ թէ՛ որչափ կ՚ընդունուին խեղճիս հիւսուածքը՝ այդ ցոյց կը տայ մեզ մօտիկ ապագան, իսկ եթէ բարեբաղդաբար որ և իցէ մի հաճութեամբ ընդունուին՝ այն ժամանակ ես ինձ, անգրագէտիս—անբաղդիս, յոյժ բաղդաւոր պիտի համարիմ, որ կարողացայ գրքերի շարքում տեսնել և իմ երգերը։

Ժողովրդական երգիչ Աշըղ-Սաան-Բաղօլցի

«ԱՇԸՂ ՓԻՋԱՀԻ»

1888 թ.

ՔԱՆԻ ՈՐ ԻՄ ԵՐԳԵՐՍ ԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՄՈՒԼԻ
ԱՅՍ ՄԻ ԵՐԳԸ ԱՅՍ ՊԱՏՃԱՌԱՒ ՇԱՐՈՒՆԱԿԵՑԻ։

Վա՜յ կարգամ ինձ նման հովիվի գլխին,
Ամեն մի ոչխարս սարէսար մնաց,
Չեմ կարող թափառել ժայռերի մթին,
Գառներիս հօտը անմխիթար մնաց։

Գանձ չ՚ունեմ, որ խաշներիս խոտ գնեմ ես,
Կամ նրանց մօտ կառավարիչ դնեմ ես,
Որ պահպանեմ մինչի գարուն հանեմ ես,
Նրանց մասին անձս ցաւագար մնաց։

Ոչխարներիս խեղճ գառներ լալում են,
Սրտիս միջի էլած եղ հալում են,
Գայլերն էկած ոչխարներս խլում են,
Սրտիս պաշարներ նետահար մնաց։

Վերջապէս չը տարաւ բաղդիս անիւը,
Մոռացել եմ ունեցածիս հաշիւը,
Ինձ նման կարճատես և կոյր հովիվը,
Ցիգահը վերքով լի ապիկար մնաց։

# 1. ՀՈՂԱԳՈՐԾ.

Հողագործ գարունն եկաւ, արտերդ մնաց ցանելու,
Ջանք արա շուտով տանես լծկանդ խամից հանելու,
Կարծեօք թէ դու փող ունես, քեզի սերմացու գնելու,
Երկաթէ խոփը սրէ, գնայ հողերդ վարելու.
Արթնացի՛ր իմ հողագործ, ժամանակը չէ քնելու, 1.
Քարմաններդ պատրաստ է, բարդոցի կեմեր մանելու։ 2.

Քու մտքերդ խորհուրդները, թշնամիքը շուտ լսեցին,
Մէկը տասը շինելով, գնացին այլոց պատմեցին,
Ոչ թէ միայնակ քեզի, այլ և որդուդ բամբասեցին,
Դրացիքդ քեզնից շուտ, իրանց գործը սկսեցին։

Չարակամ մարդիկները, կուզեն որ դու միշտ ծոյլ մնաս,
Չեն ցանկայ որ իրանցից շուտով զարթիս գործի գնաս,
Ջանք արա, որ ժիր լինիս, ընկերիցդ յետ չը մնաս,
Իմ խօսքերս թող լինին, քեզի համար անմոռաց դաս։

Մի՛ սգար, իմ սիրելիս, ինչո՞ւ են քու աչքերդ թաց,
Աշխատի՛ր որ ձեռք բերես, քեզի համար մի պատառ հաց,
Որ չասեն հողագործի չարչարանքը ի զուր գնաց,
Կամ թէ չէ Ցիգահու պէս, գրպանը խիստ դատարկ մնաց։

# 2. ՅԻՄԱՐ ՄԱՐԴ.

Յիմարին որ հազար անգամ խրատ տաս,
Ոչինչ չի հասկանայ, գլուխը հաստ է,
Այդպէսն է ազգի մէջ մի մեծ պատուհաս,
Որովհետև տուն քանդելու պատրաստ է։

Ամեն անգամ մարդոց մեծ վնաս կուտայ,
Կը խօսի խելքէն դուրս ինչպէս երեխայ,
Չի մտածէ իւր խօսած բանի վերայ,
Ըստորում նա, եզի նման գրաստ է։

1—2. Ամենայն տանց վերջումը կրկնել վիշեալ տողերը։

Ընդունակ չէ գեղեցիկ խօսք խօսելու,
Ականջ չունի բարի լուրեր լսելու,
Քաղցր լեզուով շատ մարդիկ համոզելու,
Ցիզան, մէթէ, նորա համար այդ փաստ է:

## 3. ՈՒՍՈՒՄ.

Կեցցես, դու սուրբ ուսում, կեցցես ինձ համար,
Որ իմ ազգիս համար պարգև բերիր դու,
Իմ տկար լեզուս դու արիր խիստ ճարտար,
Տրտում, տխուր դէմքիս արև բերիր դու:

Դու ինձ ինչ տեղից, ինչ տեղ հասցուցիր,
Վարդի նման, իբրև ծաղիկ բուսցուցիր,
Լեզու տալով, սոխակի պէս խօսցուցիր,
Զօրացած արմատիս տերև բերիր դու:

Ցուսամ դուն ես ինձ միտք տուող բնական,
Ամեն տեղ յարգուած ես, դուն ես աննման,
Շատ տգէտներ քեզնով եղան գիտնական,
Ցիզահուս չոր այգուն անձրև բերիր դու:

## 4. ԳԵՂԵՑԿՈՒՀԻ.

Ո՛վ սիրուն, աշխարհը քեզի չի մնայ,
Քեզ նման շատերը եկան — գնացին,
Լաւութիւնը միայն անմահ կը մնայ,
Կեանքէդ աւել սիրէ քու վատ դրացին:

Աշխատէ բարութեան ջանք ճարես քեզի,
Երկնից օթևանում կեանք ճարես քեզի,
Հոգուտ հանգստարան վանք ճարես քեզի,
Երբեք մարդ կարօտ չէ քու աղ ու հացին:

Վարդը քեզնից շատ սիրուն էր թառամաւ,
Նորա պարտիզպանը մնաց անհամբեր,
Սոխակը իւր սրտին ճարեց հազար ցաւ,
Իւր վարդարանը ագռաւներ լցին:



Աշխարհից գնացողներն ինչ տարան,
Պատանքից աւելի չունէին վրան,
Ամենքին էլ վերջին տունն է գերեզման,
Ցիզահն էլ անգազաղ այնտեղ թաղեցին:

## 5. ԲԱՆԴ.

23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻ

Իմ անիրաւ բաղդս ինձի,
Տարէց տարի մոռանում է,
Չի դառնում իմ վախտս ինձի,
Կամաց կամաց հեռանում է:

Տուել է ինձ [illegible] միրքեր,
Շինում եմ պարզ լեզուով երգեր,
Նորոգվում է իմ հին վէրքեր,
Ինձ կրակի պէս վառում է:

Իրաւ է քիչ ուսում ունիմ,
Միայն բաղդից պարգև չունիմ,
Այս գանգատը ես ում տանեմ,
Կարդացողը կռանում է:

Այլոց բարի վիճակ կուտայ,
Փառք ու լաւ ժամանակ կուտայ,
Մէկին անթիւ վաստակ կուտայ,
Ցիզահուս մօտ քռանում է:

## 6. ԱՆԲԱՂԴ ՄԱՐԴ.

Ես ում որ հոգւով սիրեցի,
Նա ինձ համար վատ դուրս եկաւ,
Կեանքս նրան նուիրեցի,
Նա թերահաւատ դուրս եկաւ:

Քանի բարեկամ ճարեցի,
Խնդիրները կատարեցի,
Զօր ու գիշեր խրատեցի,
Նա խելքից աղքատ դուրս եկաւ:

Սիրտս վիշտ ու կրակ լցի,
Ֆիզահն եմ ես Կարնեցի,
Ձեռքս որ ծառին ձգեցի,
Տակից փուտ արմատ դուրս եկաւ։

## 7. ՄԻՐՈՒՋԻ.

Այսօր ես մի սիրուն տեսայ,
Բնութեամբ ազնիւ, խոնարհ էր,
Բարև տուի հետը խօսայ,
Լեզուն լեզուից ճարտար էր։

Եսթերի նման սիրուն էր,
Երեսը սպիտակ ձիւն էր,
Հագի հանդերձը նաշխուն էր,
Մատանիքը անգին քար էր։

Պատկեր ունէր գեղածիծաղ,
Կը նմանէր լուսաշաղախ,
Աչք ու ունքն էր անշամանդաղ,
Իւր անունը Հեղինար էր։

Ինքն էր փոքր լորի նման,
Աչքերն էր պիլօռի նման,
Նայում էր խօշորի նման,
Ֆիզահին մօտը անճար էր։

## 8. ԱՆՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ 1885 ԹՈՒԱԿԱՆԻ

Ման կուգայ ժողովուրդը, ողորմելի աղքատի պէս,
Գործերը աջողակ չէ, սրտերն է յուսահատի պէս,
Ձախորդութեան ձեռքից ամենը մի տեղ փախչելով,
Մեր քաղաքն էլ դառել է, մի կղզի անապատի պէս։

Հարուստն էլ աղքատի պէս, չունեմ ասելը սովրեցաւ,
Սրտերը կոտրուելով, դառել է փլած պատի պէս,
Քանի որ մեր գործերը այսպէս դանդաղ յառաջ կերթայ,
Անձերիս վայ կարդալով, ողբանք ծեր նահապետի պէս։
Ո՛վ անմահ, Տէր Արարարիչ աջողութիւն տուր դրացուս,
Որ Ֆիզահի երգիչս բարձրանամ Արարատի պէս։



## 9. ՂՕՌՄԱՅ.

Մէկ դառի երեսըդ տեսնեմ ո՛վ սիրուն,
Ես սոխակ եմ, դուն էլ վարդ ես ինձ համար,
Աչքերդ ու այտերըդ է կարմրագոյն,
Պատանի—երիտասարդ ես ինձ համար։

Գիշեր, ցերեկ ես քու սէրդ կը քաշեմ,
Սիրոյդ կրակովը անձս կը խաշեմ,
Հերիք չէ՞ քեզ համար իմ կեանքս մաշեմ,
Հա՛, հասկացայ, մաս-մակարդ ես ինձ համար։

Քու Ֆիզահդ եմ, ինձ մի լուր տուր անուշիկ,
Վարդ այտերէդ մի համբոյր տուր անուշիկ,
Քու ձեռքովդ ինձ մի ջուր տուր անուշիկ,
Խոհեմ, հեզիկ, դու մի մարդ ես ինձ համար։

## 10. ԻՄ ՕՐԵՐԸ.

Ջուր կանցանի օրերս, տրտում, տխուր գիշեր ցերեկ,
Անձնազոհ եմ ես եղել, վէրքով հարիւր գիշեր ցերեկ,
Իմ սիրոյ ողջոյնները ամենևին մի ձայն չունին,
Տառապում եմ մշտապէս ճարակտուր գիշեր ցերեկ։

Մի լաւ օր չը պատահեց աշխարհի մէջը խնդայի,
Աչքերիս վտակները եղաւ աղբիւր գիշեր ցերեկ,
Օտար տեղեր շրջելը մարդիկ կասեն թէ դիւրին է,
Իմ այսքան թափառելս գնաց իզուր գիշեր ցերեկ։
Վերջապէս չը խնդացի աշխարհի մէջ ինքս մի օր.
Խեղճ Ֆիզահն եմ անուսում, լեզուս է լուռ գիշեր ցերեկ։

## 11. ՔԷՌԻՌ ՕՂԼԻ.

Ջուր կանցանի օրերս կեանքիցս բոլոր,
Խելագարի նման բան չեմ մտածում,
Մնացել եմ օտար տեղն ոլոր-մոլոր,
Ջուր տեղը ինձ համար ցաւ եմ տարածում։

Վիշտս նիզակի պէս անձս փորում է,

Հոգիս մարմընիցս անվերջ ջոկում է,
Մանկութեան օրերս իզուր կոչում է,
Քանի որ ես չունեմ հիմնական ուսում։

Մնացել եմ տրտում, տխուր, մերկաքաց,
Վատ արարմունքս արաւ ինձի աներուած,
Սիրտս ծարաւ, փորս քաղցած-առանց հաց,
Ցիզահն եմ գաղտնիքս, չիտեմ խօսեմ ում։

## 12. ԲԱՅԹԱՂՈՒՐ.

Ունքդ է կամար թուր,
Թերթիչներդ է սուր,
Կոյս գեղածիծաղ,
Ո՛վ սիրուն, սիրուն։

Կաթդ ընտիր — մաքուր,
Ինձ թողիր տխուր,
Լոյս անշամանդաղ,
Ո՛վ սիրուն, սիրուն։

Լեր ինձ օգնական,
Միտք տուր ընական,
Ես քեզի մատաղ,
Կոյս սիրուն, սիրուն։

Սրբ՛, իմ կեանքս,
Ջուր չերթայ ջանքս,
Իմ բերանիս աղ,
Պռոյս սիրուն, սիրուն։

Յոյս տուր ինձ հաստատ,
Ցիզահդ եմ աղքատ,
Սիրէ ինձի վաղ,
Լոյս սիրուն, սիրուն։

## 13. ՈՂՈՐՄԱԾ ՄԱՐԴ.

Բարեհոգի մարդու սրտին,



Երկնային անտառ եմ ասում,
Ողորմած, մարդասէր սրտին,
Ես պտղաբեր ծառ եմ ասում։

Աղքատից բան չի խնայէ,
Լաւ աչքով խեղճին կընայէ,
Ով Տէրոջ պատուէրը պահէ,
Նրան հեզիկ, գառ եմ ասում։

Չի պակասի իրան հացը,
Ով սրբեց խեղճ որբի լացը,
Ցիզահն եմ նրա կենացը,
Օրը հարիւր ճառ եմ ասում։

## 14. ՀՐԴԵՀ 1884 Թ.

Ամին հազար ութ հարիւր ութսուն ու չորս գարունը,
Յանկարծ ընկաւ ու վառեց, չորս հինգ խանութ եանղունը,
Նաւթի մէջ կրակ ընկաւ, աւերուեց մարդկանց տունը,
Շատի վերայ ցաւ բերեց, աչքերից կարեց քունը,
Թող միշտ յիշեն ու ողբան խեղճ Գասպարէ անունը, 1.
Որ հրդեհը կործանեց նորա խանութն ու տունը։ 2.

Այնքան մարդկանց միջից Գասպարն էր խեղճ ու ցաւած,
Կրակին ընկած միջոցին, մնացել էր մոլորուած,
Հանդերձներն ու մարմինը կրակով էր այրուած,
Գթա՛, նորա որբերին բարեխնամ Տէր Աստուած...։

Անգութ կրակը վառեց նորա սիրուն պատկերը,
Հազուստը սկսած վառուեց աչքի թերթերը,
Հոգին գնաց հաղորդեց, իր ծխատէր տէրտէրը,
Ինքը իսկոյն մահացաւ, տխուր մնաց ընկերը...։

Թէ մէկ բարութիւն ունէր, իրան հետ առաւ գնաց,
Ողջ քաղաքը ասին թէ Գասպարը վառաւ գնաց,
Մարմինը աստ թողնելով, դէպ երկինք թռաւ գնաց,
Վկայում է Ցիզահին, զուր տեղը մեռաւ գնաց...։

---

1—2։ Ամենայն տանց վերջումը կրկնել վերջին տողերը։

## 15. ՔԵԱՐԱՄԻ.

Ինձի նման աշխարհում պիղծ մարդ չը կայ,
Ամեն կողմով թշուառ վատթար, ես եմ, ես,
Վարքովս չեմ եղել բարութեան ներկայ,
Գործիս խաբուած, չարաց աւար, ես եմ, ես։

Իմ վարքս ինձ թողեց խեղճ ու մոլորուած,
Վերջը արաւ դառն աղքատ ու զրկուած,
Քանի որ ես չար գործերու եմ տարուած,
Վիրաւորուած, խեղճ, ապիկար, ես եմ, ես։

Իմ բազում մեղքերս համարում եմ քիչ,
Գործքս վատ է, վարքս ալլոց ապականիչ,
Անպիտան Ֆիզահն եմ, շատին խրատիչ,
Գլխիցս անցած, մահին յօժար, ես եմ, ես։

## 16. ԱՐՄԵՆՈՒՀԻ.

Քեզ համար վառվում եմ ես միշտ զօր գիշեր,
Ինձի խելագար արաւ մազերդ աղջիկ,
Կոչում եմ աչքերիդ երկնային լապտեր,
Գիսաւոր աստղիկ է ծամերդ աղջիկ։

Քեզի տեսնողները էրնէկ են տալիս,
Շատ մարդիկ ապշում են, երբ ման ես գալիս,
Ճակատիդ ծածկոցը քու, յետ բանալիս,
Ոսկեղէն կանթեղ է աչքերդ աղջիկ։

Արի եղիր Ֆիզահուս հետ համեմատ,
Որ սիրով կեանք վարես ինձի հետ ազատ.
Հասակդ փոքր է, մեծիցդ առ խրատ,
Ինչ որ պատուէր կուտայ քու մէրդ աղջիկ։

## 17. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ.

Աշխարհի մէջ մարդ մոլորուած չի մնայ,
Թէ ունենայ ուսում և քիչ գիտութիւն,
Ուսումնական մարդը ուր կուզէ գնայ,
Ուսումով կը ճարէ նա արտօնութիւն։



Լոյս ուսումը մարդու կեանքի տերևն է,
Ընտիր խօսքը՝ գաղափարի անձրևն է,
Ուսումը իմ անձիս երկրորդ արևն է,
Կուտայ ինձ բարի վարք ու խոհեմութիւն։

Ուսեալ անձը պտղաբեր ծառ կը լինի,
Ծաղկով լցուն, կանաչ անտառ կը լինի,
Ազգի համար մի անմեղ գառ կը լինի,
Թէ Ֆիզահն էլ ճարէ քիչ խոնարհութիւն։

## 18. ՎԱՏ ԽՕՍՔ.

Թշնամեաց սիրտ խոցող, դառն լուրերը,
Խանձեց բոլոր անձս կրակի նման,
Վերաս թափեց ողջ աշխարհի հուրերը,
Արագ խայթեց ինձի կայծակի նման։

Վատ խօսքերով իմ սրտիկս խոցուեցաւ,
Արագախօս, ճարտար լեզուս գոցուեցաւ,
Թնդանօթի նման սիրտս լցուեցաւ,
Կայծ դիպաւ վառօդիս գնտակի նման։

Ինքս հողից շինած գաւ Ֆիզահին եմ,
Նաւավար Որ Էին նաւ Ֆիզահին եմ,
Բողոք անող սրտի ցաւ Ֆիզահին եմ,
Ձայն կուտամ աշխարհին կոչնակի նման։

## 19. ԲՈՒՊԱՅԻ ԴԻՒԱՆԻ.

Գրաւել է բոլոր անձս, ո՛վ սիրուն քու պատկերդ, 1.
Խնդրում եմ, որ միտդ բերես, քու աղւանի ընկերդ։ 2.

Գիշեր, ցերեկ ես քու սիրուդ համար եղայ խիստ տխուր,
Արի՛, սրտիս սիրականը ձեռքովդ ինձ մի ջուր տուր,
Խնդրում եմ, որ չը մոռանաս, սիրովդ լինիս ամուր,
Իմ վիրաւորած մարմինիս, մի՛ տար սիրոյ սուսերդ։

Ջէ՞ որ քու խեղճ Ֆիզահիդ եմ, մնացի առանց ուսում,
Իմ սրտիս վիշտն ու ցաւերը, քեզանից ի զատ խօսեմ ո՞ւ ?,

1—2։ Ամենային տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը։

Ահա ես սոխակ եմ դառել, միշտ Վարդուհի եմ կարդում,
Ճանապարհս լուսաւոր է, փառք պայծառ լոյսերդ:

## 20. ԻՄ ՎԻՃԱԿԸ.

Նատ խղճալի, նեղ վիճակի մնացի,
Ցաւս հազար, դու նկատէ անթիւ է,
Բժիշկներին տեսայ, ցաւալից լացի,
Ասին ցաւդ խիստ երկաթէ անիւ է:

Այս ցաւովս ողջ մարմինս մաշուեցաւ,
Երակներուս արիւնը քաշուեցաւ,
Ցաւի սաստկութիւնից կեանքս խաշվեցաւ,
Ծակեց սիրտս, այս մախաթ է, որդն է:

Ցիզա՛հի, պատասխան պէտք է տաս մեղքիդ,
Մեղաց մէջ մի՛ ձգիր խղճալի հոգիդ,
Տուր աղքատաց բոլոր արծաթդ ու ոսկիդ,
Գերեզմանը ոչ արծաթ է ոչ թիւ է:

## 21. ԴՈԻՊԷԻԴ.

Քայլքդ մանրիկ, դու գեղեցիկ,
Վարքդ մաքուր է սիրական,
Չեմ տեսած քեզ նման աղջիկ,
Եդեմական բոյս հոգի ջան:

Քեզ համար խելագարուել եմ,
Սիրոյդ կրակով վառուել եմ,
Առանց քեզի աւերուել եմ,
Դու իմ ասպար ու պահապան:

Սիրոյդ համար եղայ գերի,
Փափագս մի թողուր թերի,
Կեանքս կրակովդ կերի,
Խոստացիր սէր ինձ յաւիտեան:

Դուն Ցիզահուն լեր ցաւակից,
Գեղեցիկ ես բովանդակից,



Հոտդ քաղցր է մանուշակից,
Ո՛վ ծաղկով լեցուն վարդարան:

## 22. ՀԱՐՈՒՍՏ ՈՄՆ.

Ինչու ես յուսացեր, ո՛վ մարդ քու գանձիդ,
Չը գիտե՞ս, ստեղծող թագաւոր ունիս,
Սատանի շալիկը հագել ես անձիդ,
Գիտցիր որ անաչառ դատաւոր ունիս:

Քեզ նման շատ մարդիկ փողին յուսացին,
Վերջը դառն աղքատ ու խեղճ մնացին,
Անձին վայ կարդալով—զղջալով լացին,
Մտածէ, գործքդ տեսանող Լուսաւոր ունիս

Աշխարհքի կայքերը հողին կը մնայ,
Մօրիցը ծնուողը պէտք է մահանայ,
Մարդ Ազրայլի ձեռքէն ո՞ւր պիտի գնայ,
Ցիզա՛հի, հոգի սուրբ, թեւաւոր ունիս:

## 23. ԲԱՐԵԿԱՄ.

Բարեկամ, ես այսօր քեզի տամ բարև,
Որ մշտապէս մենք իրարու ճանաչենք,
Քու գործքերդ թող փայլեն իբրև արև,
Որ մենք դալար վարդենու պէս կանաչենք:

Միմեանց մենք, պէտք է բարի կամենանք,
Իրար բարեաց համար, պէտք է մահանանք,
Գործով մենք կատարենք, ոչ թէ լոկ խօսանք
Եւ սրտով իրարու հեռուից կանչենք:

Խեղճ Ցիզահն եմ, սիրտս լցուած է վէրքով,
Ես անշնորհք, բարեկամքս շնորհքով,
Իմ մարմինս ու հոգիս շաղուած է մեղքով,
Ոչ մէկս էլ աշխարհում մնալու բան չենք:

## 24. ՍԻՐՏ.

Բա՛ւ է մնաս տրտում տխուր,
Զօրացի՛ր սիրտ, զօրացի՛ր սիրտ,

Խորհուրդդ արա սրադ աղբիւր,
Նորացի՛ր սիրտ, նորացի՛ր սիրտ։

Աշխատէ նորից ճարես կեանք,
Որ քեզ համար չը գայ վտանգ,
Մեր բաղդիցը ո՛ւմ գանգատ տանք,
Խորացի՛ր սիրտ, խորացի՛ր սիրտ։

Օրհնէ միշտ քու բարեկամին,
Փրկչիդ փառք տուր ամեն ժամին,
Երբ որ դէմդ ելնի թշնամին,
Քարացի՛ր սիրտ, քարացի՛ր սիրտ։

Եռանդ ճարէ քեզի հաստատ,
Որ չը մնաս դու միշտ աղքատ,
Մի՛ լինիր երբէք յուսահատ,
Խեղճ Ֆիզահուն, ուրացի՛ր սիրտ։

## 25. ԳԱՆԳԱՏ ԲԱՂԴԻՑ.

Իմ անիրաւ բաղդէս ո՛ւմ գնամ գանգատ,
Սրտիս ծաղիկներու վերայ ձիւն բերեց,
Ամբողջ խելքս ու միտքս արաւ անհաստատ,
Մտածելով մտքիս վերայ քուն բերեց։

Ի՞նչ պատճառով բաղդս ինձ հետ ներհակ է
Իւր ձեռքի գաւաթը մահու բաժակ է,
Նրա տուած ցաւը մի սուր սլաք է,
Աչքիս արտասուքի տեղն, արիւն բերեց։

Իմ բաղդիս սեաւ նամակները ընթերցան,
Կարդալուց յետ, ինձի իսպառ մոռացան,
Բոլոր ցաւս, թշնամիքս իմացան,
Խեղճ Ֆիզահուս, նա մի վատ անուն բերեց։

## 26. ԲԻԱԳ ՈՒՍՈՒԼԻ.

Ինիրաւ բաղդ, ինչո՛ւ ինձ մօտ չես գալիս,
Մնացել եմ խեղճ ու սոոր վիճակի,



ՅԵՐՈՒԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆ
ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929

Թշուառ աղքատներուն էրնէկ եմ տալիս,
Հասուցի՛ր օրերս վատ ժամանակի։

Մանկութեան օրերս անցուցի ի զուր,
Ամենից լաւ օրս է տրտում ու տխուր,
Քու ձեռքիցդ մէկ ցաւս եղել է հարիւր,
Մնացել եմ քաղցած, կարօտ կամակի։

Բաւական է ինձի թողնես մոլորուած,
Որ միշտ մնա գամ ռոտաբոբիկ, գլխաբաց,
Ցաւալի Ֆիզահն եմ աչքերս են թաց,
Մի՛ մատնիր իմ անձս դու վառ կրակի։

## 27. ԹԱԻՐԷՋԻ.

Սիրական սիրովդ խելագար դառայ,
Դու ափսոսա՛, երիտասարդ հասակիս,
Մանուկ հասակովս եղայ քեզ ծառայ,
Գոնէ ափսոսա՛ դու իմ նպատակիս։

Տրջում է սրտիս մէջ սիրոյդ անիւը,
Չը կայ երբէք, ասսեր սիրոյդ հաշիւը,
Տալեցի՛ր սրտիս մէջ ցաւերուդ թիւը,
Սիրով յաղթող եղար իմ ժամանակիս։

Թորգոմեան ազգիցն ես, ինքդ անդրանիկ,
Քու կամառ ունքերդ, ինձ վառեց, աղջիկ,
Քայլքդ կաքաւի է, իսկ դու աղունիկ,
Խնդրեմ լուր տաս Ֆիզահ—երգիչ սոխակիս։

## 28. ԳԱՆԳԱՏ ԻՐ ԱՆՁԻՑ.

Չի ճարուի աշխարհում ինձ պէս խելագար,
Իմ խելքիս ձեռքիցը, օտար եմ դառել,
Տերեներս թափուած, եղել եմ չոր ծառ,
Այլոց համար ես մի նօտար եմ դառել։

Իմ ցաւիս բժիշկը ինձի չը փրկեց,

Խրատեց, համոզեց, օտար տեղ ղրկեց,
Ցաւը իմ մարմինս գոյն գգոյն ներկեց,
Ես մի մարդ եմ, ցաւով հազար եմ դառել։

Այսպէս էր կամեցել իմ Տէր—Փրկիչս,
Այնպէս էլ կրակուած դրեց գրիչս,
Ցաւով լցուած—տկար Ֆիզահ երգիչս,
Լուծս կոտրած, անպէտք նժար եմ դառել։

## 29. ՂՕՇՄԱՅ.

Ջուր անցուցի իմ երջանիկ օրերս,
Այսօր, այսօր,—վաղը ասելով,
Դատարկ մնաց իմ գետնափոր հորերս,
Երկարաձամ կնոջ խաղը լսելով։

Մարդս պէտք չէ իրա անձից գանգատէ,
Երեսը առ Աստուած պէտք է հաստատէ,
Առանց ձանձրանալու պէտք է աշխատէ,
Երեսը չոր քարին, հողին քսելով։

Ո՞վ եկաւ աշխարհը, վերջը գոհ գնաց,
Դառնաշխատ Ֆիզահն եմ փորս միշտ քաղցած,
Երգիչներն էլ ինձի նման առանց հաց,
Մեռան,—«Աստուած ողորմած է» ասելով։

## 30. ՀԻՋՐԱՆ-ՔԵԱՐԱՄԻ.

Բացուելու ես, իբրև ծաղիկ սիրուհի,
Ցոյց տուր ինձի անշամանդաղ պատկերդ,
Ամենայն շնորհքով լի ես տիրուհի,
Ցոյց տուր ինձի գեղածիծաղ պատկերդ։

Կատարեալ վարմունքով, սէր ու լոյս ունիս,
Անուշահոտ, գեղեցկադէմ բոյս ունիս,
Ամեն կողմից քաղցր խրախոյս ունիս,
Բաց մէկ տեսնեմ լուսաշաղախ պատկերդ։

Ֆիզահի երգիչս այսքանը կասէ,



Խնամք արա ինձի, խօսքերս լսէ,
Խորհուրդիս հետևիր, եկ, ինձ հետ խօսէ,
Որ չը լինի շատերին խաղ պատկերդ։

## 31. ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԵՐԳ.

Պատրաստեք ձեր չըխ-չըխ, կարկաչաները,
Տղայք, պատրաստ կեցէք Ծաղկազարդն եկաւ,
Ուսերուդ գցեցէք ձեր կապարճները,
Ցեզի հրի հատիկ տուող մարդն եկաւ։

Եկէք շնորհաւորենք Փրկչի ամիսը,
Խնդրենք, որ շուտով գայ առատ յունիսը,
Արթնացիր խեղճ աղխակ մերձէ մայիսը,
Քո սիրահար—կարմրակակոն վարդն եկաւ։

Այս եկողն է մեզի բազում լոյս տուող,
Սուրբ Հոգի պարգևիչ, աչքի լոյս տուող,
Մեզի է Արարիչ, խրախոյս տուող,
Ֆիզահու ջանքերի միակ զարդն եկաւ։

## 32. ԴՈՒԲԷԻԴ.

Վիճակէդ գոհացիր ո՛վ մարդ,
Քանի որ Տէր Յիսուս ունիս,
Քու անձդ մի դնիր թակարդ,
Երկնային խրախոյս ունիս։

Քու վիճակէդ դու գոհացիր,
Երկնից պատուէրի մէջ կեցիր,
Բոլոր սուրբ գրքերն ընթերցիր,
Մինչդեռ սաղ աչքի լոյս ունիս։

Սուրբ գրքի խօսքն է թանկագին,
Զարից կը փրկէ մեր հոգին,
Մի՛ սիրիր արծաթն ու ոսկին,
Թէ հոգի սրբալոյս ունիս,

Մեզ աշխարհը չի տայ պարգև,
Մալըս ծառ է, առանց տերև,

Ցիգահ, աչքեդ թափէ անձրև,
Եթէ եռանդ ու լոյս ունիս։

## 33. ՍԷՄԱՅԻ.

Ճշմարիտ, սուրբ եղիր ով սիրտ, քեզ երկնային ուսուցիչ կայ,
Իրան Սուրբ Հոգիով գրուած, Աւետարան խրատիչ կայ,
Բոլոր բարի քու գործերդ կը գրուի թուղթ ու գրիչ կայ,
Տիեզեր աշխարհին իշխան, մեր հոգւոյն լոյս պարգևիչ կայ,
Թէ որ գոցուած լինինք, ո՜վ սիրտ, մեզ բանալի հասուցիչ կայ, 1
Ցաւի կամ կրակի ձեռքից, յայտնապէս մեզի Փրկիչ կայ։ 2

Այն Փրկչին յուսալու է, որ լոյս է նորա հագուստը,
Նա է կապուած մեղքի արձակում տուող, գտնող կորուստը,
Միւս անգամ նա գալու է, բայց յայտնի չէ իւր գալուստը,
Բոլոր աշխարհի հզօրն է, ամեն արքայից հարուստը։

Աստուած մեր սուրբ սիրոյ համար միակ Որդին աշխարհ ղրկեց,
Եկաւ Միածին Յիսուսը ձեռքերովը մեզի գրկեց,
Աստուածային սուրբ արիւնով յայտնապէս Գողգոթան ներկեց
Ու մահացաւ դժոխք գնաց, Ադամայ հոգին Նա փրկեց։

Հանապազ մեր հոգւոյն լոյս պարգևողին համար լալու ենք,
Մենք բոլորս Նորա սիրոյն գիշեր ցերեկ ման գալու ենք,
Մեր վատ գործոց համար, գիտես, հաշիւ ու համար տալու ենք,
Անարժան Ցիգահս կասեմ, մեր արածը զգալու ենք։

## 34. ՄԻԻԽԷՄՄԷՋ.

Սիրա՛կան, քու սիրովդ խելագարուած եմ, սիրա՛կան,
Քու սիրոյդ նետերովը վիրաւորուած եմ, հո՜գի ջան,
Անմահական լոյս պատկերդ կարծես թէ լինի ծիածան,
Քու ծամերդ ոսկէթել է, գլուխդ ո՞րքան գովական,
Տէրը քեզ պարգևել է գեղեցկութիւն արքայական,
Խղճալւոյս՝ տեսութեանդ միանգամայն արա՛ արժան։

Գիտեմ որ պատկեր ունիս արեգակից գեղածիծաղ,
Եւ աղեղնակ ունքերդ է, լուսնեակից անշամանդաղ,

1—2. Ամենայն տանց վերջումը կրկնել յիշեալ տողերը։



Երկնային ջահ աչքերդ, արուսեակից լուսաշաղախ,
Բնութիւնդ խոհեմ է, դուն ես հրեշտակից խաղաղ,
Լեզուդ մեղրից անուշ է, թող կեանքս լինի քեզ մատաղ,
Բազէի սուր աչքերով, ընթերցիր սաղմոս, շարական։

Մի՛ խնայիր, սիրելիս, ինձ ղրկէ սիրոյ նամակդ,
Նրանով ինձ հասկացուր, թէ ինչպէս է քու վիճակդ,
Կատարեալ հոգւով գրէ ինձի քու սիրոյ մուրհակդ,
Գիտես որ սիրոյդ համար եղել եմ անբաղդ սոխակդ,
Կամ թէ քեզ ցնծում բերող գեղեցկափետուր թութակդ,
Ուրեմն, ես թռչուն եմ, դուն եղիր ինձի վարդարան։

Լոյս երեսիդ յորաժամ, ծարաւ եմ կենաց ջրի պէս,
Անուշահամ խօսքերդ, խայթում է սիրտս սրի պէս,
Նազելով քու մանգաղդ, այրում է ինձի հրի պէս,
Դէպի քեզ նայող մարդը, իսկ սևանում է մրի պէս,
Ցիգահի երգիչիս մօտ, նման ես սպիտակ կրի պէս,
Թէ որ ինձ չես համաձայն, համեցէք գնանք դատարան։

## 35. ՆԱՔԱՐԱՏ—ԴԻԽԱՆԻ.

Մի սիրելի ունէի, ձեռքէս արագ թռաւ գնաց,
Սրտիս ուրախութիւնը, բոլորովին առաւ գնաց,
Շատ փափագ էր աշխարհին, միայն սրտով ծարաւ գնաց,
Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։

Իմ սիրելիս ինձ համար, պտղաբեր էր մի ծառի պէս,
Բարոյական խօսքեր ունէր, հողանիւթ անտառի պէս,
Բնութիւնով շատ ազնիւ էր, վարքով անմեղ գառի պէս,
Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։

Իմ ծնողս ինձ համար, բարեխնամ էր մշտական,
Իմ ճիւղքիս արմատն էր, բոլորովին ինձ պատուական,
Խեղճ Ցիգահուս մոռացաւ, լոյս տուն գտաւ տէրունական,
Իրան բարի գործքերը, բոլորովին առաւ գնաց,
Սիրելիս պատանի էր, չնչին ցաւով մեռաւ գնաց։

## 36. ՀՈՂԱԳՈՐԾ.

Աշխարհին եղիր պատուական,
Որ քեզ տեսն մարդ բանական,
Թշնամիք ցաւերդ իմացան,
Վէրքդ արին հարիւր հողագործ:

Քու թշնամիքդ չունին վարք,
Քեզ հետ միշտ խօսում են անկարգ,
Դատարկ կուժդ լիք փարչին զարկ,
Ուժովդ ամուր, հողագործ:

Մի՛ քնիր, գործդ կատարէ,
Որ քեզ չտեսն թէ անճար է,
Ունեցած դաշտերդ վարէ,
Թոռներուդ ձայն տուր, հողագործ,

Միշտ դու գործիդ արի կեցի,
Միտ ա՛ռ, քեզ այսքան գովեցի,
Շատ պահէ հաց, ոչխար ու ձի,
Ձեռքդ ա՛ռ թակ, դուր, հողագործ:

Խրատս արա՛ ականջիդ օղ,
Աստուած է հարազատ ծնող,
Ֆիդաին եմ այլոց խրատող,
Վարքովս տխուր, հողագործ:

## 37. ՂԵԼԷՆՏԵՐԻ.

Ինձ մոռացել է սրտովը ազնիւ սիրականս,
Երբ կամի կանէ ինձի հետ կռիւ սիրականս,
Հնուց մնացած բարիքները թողեց ու գնաց,
Սրանից յետ պահանջում է հաշիւ սիրականս:

Կեանքս որ նուիրեմ սիրոյն համար քիչ է ամեն ժամ,
Կուտայ սիրովը ինձի միշտ պատիւ սիրական,
Թէ որ սլանայ, երկնքի գաւառը կը հասնի,
Այսպէս շնորհաց թռչունն է—արծիւ սիրականս:

Խելագարի պէս զօր ու գիշեր քեզի եմ կանչում,
Ֆիդահուս սրտի մէջ շրջող անիւ սիրականս:



## 38. ԽՕՍՔ ԱՌ ԱՇԱԿԵՐՏՆ.

Սիրելի Ֆահրատ աշակերտ,
Երգէ մենաստանին համար.
Աշխատէ չը մնաս անկիրթ,
Պէտք գաս դատարանին համար:

Վարպետիդ խրատը լսէ,
Գիտցածդ պարզը խօսէ,
Բարոյական երգ սկսէ,
Ուրախ հարսնարանին համար:

Սիրովդ եղիր տիրասէր,
Որ չը լինիս մարած լապտեր,
Քեզ ճարէ մի խոհեմ ընկեր,
Ազնիւ աստիճանին համար:

Քու բարիդ, չարդ ճանաչէ,
Արմատիդ վերայ կանաչէ,
Աղօթքով Տէրոջը կանչէ,
Հոգուտ սրբարանին համար:

Շատ մի՛ լինիր խեղճ ու անճար,
Ունեցիր բնական հանճար,
Լէր պարզախօս, լեզուով ճարտար,
Անբաղդ գերդաստանին համար:

Աշխատէ ճարես լաւ վիճակ,
Սովրէ ածել տաւիղ, չուլթակ,
Երգ յօրինէ քեզ յիշատակ,
Պէտք գան երգարանին համար:

Աշխարհում պահէ թանգ ա՛նուն,
Սուրբ հոգւով եղիր զուարթուն,
Եթէ ունիս մաքուր արիւն,
Թափէ պատուականին համար:

Բարի սիրտ ճարէ քեզ հաստատ,
Եղիր սուրբ գրքին համեմատ,

Քեզանից փոքրին տուր խրատ,
Անմահ պատուիրանին համար։

Մի՛ լինիր չոր անտառի պէս,
Եղիր դու մաքուր գառի պէս,
Բոյս տուր պտղաբեր ծառի պէս,
Հոգուտ բուրաստանին համար։

Հեռացուր քեզանից չարութիւն,
Ունեցիր դու միշտ բարութիւն,
Տուր աղքատաց ողորմութիւն,
Անձիդ գանձարանին համար։

Լեր դու առատաձեռն միշտ,
Որ չըպատէ քեզ ցաւ ու վիշտ,
Սուտ գործին մի՛ վկայիր ճիշտ,
Վատ ընկերի բանին համար։

Նաէ քու վարպետ Ֆիզահուդ,
Մեզ աշխարհից չըկայ օգուտ,
Բոլոր ջանքերս են անօգուտ,
Սառը գերեզմանին համար։

## 39. ՈՒՆԱՅՆ ԱՇԽԱՐՀ.

Յարաժամ մարդկանց մահը, օրինակ է աշխարհին,
Մարդուս մահն ու ծնունդը, շարունակ է աշխարհին,
Աւելի գանձ սիրողը, միշտ փափագ է աշխարհին,
Վա՜յ, այն մարդին այս դարիս, որ մենակ է աշխարհին,
Ծով ու ցամաք ստեղծողն, հեղինակ է աշխարհին։

Ունա՛յն աշխարհ շատերին, դու ցաւի տուն կըտանես,
Ընկղմած են գուբերդ, ինձ պէս մարդ քանիս, քանիս,
Թէ որ հմուտ բժիշկ ես, արի օգնէ իմ ցաւիս,
Աստիճանս փոքրիկ է, գոնէ խղճա՛ համբաւիս,
Մարդուս բարի անունը, աշտանակ է աշխարհին.

Երբէք մի մարդ չըգտայ, որ ապրէր լիակատար,
Սողոմոնին, Սամսոնին, կլանեցիր սուտ աշխարհ,



Եւային, Ադամին էլ, ցաւով թողիր անդադար,
Իմ արեանս էլ ծարաւ ես, երբ որ դուզես՝ արի տա՛ր,
Մարդիս վերջի հանդերձը, սպիտակ է աշխարհին։

Մի մարդ երբէք չունի քու մէջը իր տուն սեպհական,
Հարուստ, աղքատ չըգիտես, կանես ուղիղ դատաստան,
Շատ սոխակներ մունջ թողիր, կացին առանց վարդարան,
Այդ մասին խեղճ Ֆիզահը, երգեց—բաց արաւ բերան,
Հաշուեց, որ լաւ անունը, արեգակ է աշխարհին։

## 40. ԽԱԺԻԿ-ՄԱԺԻԿ ԱՉԵՐ.

Քու սիրովդ միշտ վառվում եմ անուշիկ,
Խաժիկ-մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր,
Դէմքդ սիրուն և խօսքերդ քնքուշիկ,
Խաժիկ-մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Պատկեր ունիս, սիրուն, իսկ գեղածիծաղ,
Աչքերդ ու ունքերըդ՝ է անշամանդաղ,
Սիրա՛կանս, ես քեզի եմ միշտ մատաղ.
Խաժիկ-մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Սիրոյդ համար ես մի բոլբոջ կանանչ եմ,
Սոխակի պէս, վարդ նազելի կըկանչեմ,
Դէմքդ տեսած ժամանակին կամաչեմ,
Խաժիկ-մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Մի՛ կորցնիր այդ քու թանդ ժամանակդ,
Քանի որ փոքր է, սիրուն հասակդ,
Մի՛ թօթափիր աչքերիցդ վտակդ,
Խաժիկ-մաժիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր։

Ոսկէթել մազերուդ, սանտր է հարկաւոր,
Ականջիդ գինդերը, մանտր է հարկաւոր,

Ցիզմհն եմ, սիրուհիս ծանօթ է հարկաւոր,
Խամիկ-մամիկ աչեր, դու իմ կեանքս կէս արիր,
Ծուռ նայելով, ինձ էլ քեզի պէս արիր:

## 41. ՄԻԽՄԸԳԳԸՄ-ԳԻԽԱՆԻ.

Ինձի մոլորուած թողեց, աղնիւ սիրականս գնաց,
Վերքերուս սպեղանի դնող հոգի-ջանս գնաց,
Մի նորատունկ ծառ էի, սիրող պահապանս գնաց,
Ինձ թշնամուց ազատող, ասպար ու վահանս գնաց,

Վերջապէս խեղճ թողնելով ինձի, այգեպանս գնաց, 1.
Ո՞ւր փնտռեմ, որ գտանեմ, հոտով բուրաստանս գնաց: 2.

Անդադար գիշեր-ցերեկ, արիւն կուլամ գառիս համար,
Ջրերն այժմ պատրաստ են, այն պտղաբեր ծառիս համար,
Թանձրացած մի շուք իջաւ, ծաղկալի անտառիս համար,
Երկնային աշխարհիցը, արև եկաւ սառիս համար:

Ինձանից բաժանուելով, շուտ գնաց ընկերի քովը,
Գնաց իրան սիրելի, այն լոյս պատկերի քովը,
Շտապօք վազեց գնաց, իրան սիրող սէրի քովը,
Որ կամենայ կը տանի Ցիզահուն էլ վերի քովը:

## 42. ԳԻՐԵԱՆԻ

Ո՛վ սիրտ, եթէ որ վատ լինիս կը դատեմ,
Գիտցիր որ քեզ համար դատաւոր եմ ես,
Տգէտներուն ես միշտ պէտք է խրատեմ,
Ըստորում օրէնքին, պարտաւոր եմ ես:

Բարի խրատն արա քու ականջիդ օղ,
Եղիր սուրբ խորհրդով, այլոց խրատող,
Խեղճերու ցաւերին լեր դու փարատող,
Մարդկանց մէջը տխուր—սևաւոր եմ ես:

Խեղճ Ցիզահն եմ ցաւով լցուած յարաժամ,
Չը խնդացի աշխարհի մէջ մի անգամ,

1—2: Ամենայն տանց վերջում կրկնել վերջին տողերը:



Մինչև իմահ պիտի օտար տեղ ման գամ,
Վայրենի դաշտերում, թևաւոր եմ ես:

## 43. ՄՇԵՑՈՒ ԵՐԳ.

Ես էնչ թավուր քար չիկար եմ,
Թորկեր եմ զիմ ճրժերն ի չօլ,
Բառատայ խլխին ըէկար եմ,
Կը կրտռտեմ, բէուտայ սօլ:

Հերիք մնամ էլու դռներ,
Երթամ գտնեմ զիմ խեղճ գառներ,
Ջրեմ իմ բօստընի ծառներ,
Տինեմ ընտոր աղբուր ու գօլ:

Ջուր յէր դատեմ ես փորու խաց,
Դան իմ աւաիք մնաց բաց,
Ճրժեր գուլան, տրկներն է թաց,
Ես կու պառկեմ, դօշակս է բօլ:

Սէֆիլ Անօս մնաց լալով,
Մեռաւ խըլխի պարտքեր տալով,
Թըխ ինք մնայ հերուայ շալով,
Կրպէն խաղայ առանց դըհօլ:

## 44. ՔԻՒՐՃԷՏ ՂԵԼԵՆՏԵՐԻ

Արէ իմ կեանքս,
Լսէ իմ ջանքս,
Լեր ինձ սիրական,
Դառն աշխատանքս,
Իմ հանգամանքս,
Արէ հոգի ջան:

Պողեալ ծառ եմ ես,
Հով անտառ եմ ես,
Լեզուիդ բառ եմ ես,
Քեզի գառ եմ ես,
Լեր ինձ պահապան:

Զէ՚, լաւ ծաղիկ եմ,
Սիրոյդ մօտիկ եմ,
Քեզ անդրանիկ եմ,
Ես աղունիկ եմ,
Բացուի՛ր, վարդարան։

Քեզի փափագ եմ,
Սիրոյ նամակ եմ,
Ի՞նչ նպատակ եմ,
Վարդիդ սոխակ եմ,
Լեր ինձ պարտիզպան։

Քեզ միշտ կը կանչեմ,
Նաեւ կանանչ եմ,
Ես Ֆիզահիդ չեմ,
Արի որ ննջեմ,
Ընդ քեզ յաւիտեան։

## 45. ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ

Չի ճարուի աշխարհումը, վարքով խելագար ինձի պէս,
Տուն ու տեղից զրկուած, պանդուխտ ու օտար ինձի պէս,
Ոչ ոք չը կայ վիրաւոր, նաեւ դառն աղքատ խղճալի,
Անտէր ու անտիրական, ցաւալի, տկար ինձի պէս։

Իմ ցաւերս ու վշտերս, աշխարհի մէջը անթիւ է,
Անզլուխ ման՝ եմ գալիս, չը կայ մի նիհար ինձի պէս,
Բաղդը որ բաժին տուաւ, օտար տեղերն ինձի տուեց,
Կա՛յ արդեօք ինձի նման, ընկնող սար ու քար ինձի պէս։
Ասում են թէ ջրտաքը, ջրի ճամբէն է կոտրվում,
Ոչ թէ միայն Ֆիզահը, կը ճարուի հազար ինձի պէս։

## 46. ԳԱԶԷԼ ՂԷԼԷՆՏԷՐԻ

Չի լինի խղճալի, մտքովը Փրկիչ ունեցողը,
Իրան սիրոյ հետ, մշտական գրիչ ունեցողը,
Կունենայ ջանք, միշտ սուրբ սէրի հետը քայլելով նա,
Ոչ թէ չափազանց մտքովը կորիչ ունեցողը։

Ունայն աշխարհը շատ մարդկանց ճամբից կը հանէ,



Աւելի գործից, կարծեմ լաւ է քիչ ունեցողը.
Մարդիս երկրորդ աչքի լոյսն է շնորհքն ու ուսումը,
Մեծ փառք կստանայ, բերանին կապիչ ունեցողը։

Օգն որ ելանի անուսում մարդը, մարդ չի դառնայ նա,
Ինչպէս Ֆիզահուս նմանակ երգիչ ունեցողը։

## 47. ՏԱՃԿԱԿԱՆ ՇԷՔԻ

Դու ես կենաց ծաղիկ, սիրելի աղջիկ,
Ինձ համար անդրանիկ, սիրական ես դու,
Գնացքդ քնքուշիկ, ինքդ աղունիկ,
Խօսուածքդ անուշիկ, հոգեհան ես դու։

Խօսքերդ թանկ ակ է, կենաց մուրհակ է,
Այդ ինչ նպատակ է, վատ ժամանակ է,
Երեսդ ապլտակ է, սրտիս սոխակ է,
Այս իմ սոխակ սրտիս, վարդարան ես դու։

Յօնքդ կամար թուր է, թերթիչդ սուր է,
Արտասուքդ աղբիւր է, ծովի փրփուր է,
Կաթդ ընտիր—մաքուր է, Ֆիզահը կոյր է,
Հոտով քաղցր բուրէ, պահապան ես դու։

## 48. ՄԻՒՍՏԷԶԱՏ

Արի՛, սիրելիս ընթերցիր իմ սիրոյ նամակս,
Լսէ նպատակս,
Միշտ քեզ դոչելով, թափվում է աչքերից փտակս,
Արի՛ միայնակս։
Սիրոյդ համար միշտ վառվում է գիշեր ցերեկ կեանս,
Արի՛ սիրականս,
Ո՜հ, ինչ պատահեց հեռացար դու իմ սիրաբանս,
Ա՛խ, իմ հոգեհանս։
Տերեւիդ մասին վառվում է ծառս քեզի համար,
Ծառս քեզի համար,
Անդադար ցաւով մաշվում եմ գառս քեզի համար,
Արի՛ իմ սոխակս։
Գիշեր ու ցերեկ քու սիրովդ չարչարվում եմ ես,
Աննետհարվում եմ ես

Հասկացի՛ր, հոգիս, քեզ համար միշտ տկարվում եմ ես
Նուտ հասիր քամակս։
Խելագարի պէս փնտռում է քեզ Ֆիզահն ամեն տեղ,
Ո՛վ Արամագդի ցեղ,
Աշտոտ ու տկար մնացի, պալարիս հասուր դեղ,
Լեցուր իմ փափագս։

## 49. ՄԻՒՍՏԷԶԷՏ

Ի՞նչ պէտք է տանի աշխարհից պանդուխտն ու օտարը,
Սրտով է սգաւոր,
Զունի մի խնդում, լաւ վիճակ, տրտումն ու տկարը,
Որ լինի թեւաւոր։
Թէ սէր ունենայ սրտի մէջ վառ-վառ իրան համար,
Փառ-փառ իրան համար,
Թէ սոխակի պէս կարդան ճառ-ճառ իրան համար,
Չի լինի փառաւոր,
Այդպէս խղճալի մարդիքն են վէրքով լիքը լցուած,
Խղճալի մոլորուած,
Մինչ այդպիսիքը բարոյական ույժ չեն ստացած,
Փառքից են հեռաւոր։
Գոչէ Ֆիզահի օտարներու հեղինակին միշտ
Հոգի ունեցիր ծիշտ
Չը լինի թէ ընդունիս վատ անունը ամբարիշտ,
Որ լինես բաղդաւոր։

## 50. ՄԱՐԱՔԵԱՑ ԴԻՒԱՆԻ

Ինձ գրաւեց սիրուհի քու լուսոյ փրփուր աչքերդ,
Եդեմական խմելիք է, դրախտի ջուր աչքերդ,
Երբ որ տեսնեմ, կը ցանկանամ, այդ լուսափառ պատկերդ,
Իսկապէս ճանաչողներ կան, եռանդուն հուր աչքերդ։

Յօնքերդ կարծես աղեղ է, աշխարհում չը տեսնուած,
Դէպի մեզ անուշ է նայում, սլաքից սուր աչքերդ,
Քու շեկագոյն ծամերուդ արժան տեսայ անգին քարեր,
Թերթերունքներդ թառամած, էր է տխուր աչքերդ։

Սեւ աչքերուդ տեսութեանը փափագ է խեղճ Ֆիզահը,



Արտասուքը թող որ թափէ, ինչպէս աղբիւր աչքերդ։

## 51. ԱՌ ՍԻՐԵԼԻՆ

Սիրականս քեզ համար,
Գիշեր, ցերեկ վառվում եմ,
Դու խորհուրդ տուր ինձ համար,
Չէ, ես խելագարվում եմ։

Արի մօտս անուշիկ,
Խօսքերդ է քնքուշիկ,
Դուն խօսիր ինձ հետ յուշիկ,
Գիտես, որ մոլորվում եմ։

Քեզի մօտս կանչելով,
Շատ վաղ քեզ ճանաչելով,
Դէմքիցդ ամաչելով,
Լոյս պատկերիդ տարվում եմ։

Ես վարդ եմ, դու՝ ինձ սոխակ,
Միշտ քու սիրոյդ եմ փափագ,
Խեղճ Ֆիզահիս միայնակ
Կանգնած դէմդ լալում եմ։

## 52. „ԾԱՆՏՐ ԿԵՑԻՐ ԼԻՏՐ ԳԱՍ"

Աչքով նայէ միշտ հոլին,
Քեզ իբրեւ մարդ ծնողին,
Չափաւոր խմէ օղին։
«Ծանտր կեցիր լիտր գաս։
Սա օղի է ու թան չէ, 1.
Ամեն խմողի բան չէ»։ 2.

Ջուր մի անցըներ օրըդ,
Միտդ բեր Տէր հզօրդ,
Գիշեր մի շինիր զօրդ,
«Ծանտր կեցիր լիտր գաս»։

Եղիր դու մարդ բանական,
Քեզ խելք ճարէ բնական,

1—2. Ամենայն տանց վերջում կրկնել վերեւալ տողերը։

Գործիդ նայէ տնական.
«Ծանտր կեցէր լետր գաս»։

Թանդ պահէ քու անունդ,
Մի՛ երկարեր կանգունդ,
Շուտ կաւերես քու տունդ.
«Ծանտր կեցէր լետր գաս»։

Մի՛ կորցըներ վիճակդ,
Լաւ պահէ ժամանակդ,
Փոքր չէ քու հասակդ.
«Ծանտր կեցէր լետր գաս»։

Տանդ կայքը ծախեցիր,
Ձեռքդ փայտին մխեցիր,
Ցիգանհի գգոյշ կեցիր.
«Ծանտր կեցիր լետր գաս»։

## 53. ՄԻԻԽԷՄՄԷԶ

Վէրքս փարատող չը գտայ, մնացի խաւար, մնացի,
Գանգատս դատող չը գտայ, մնացի անճար, մնացի.
Բժիշկ խրատող չը գտայ, մնացի տկար, մնացի,
Ինձի դաս տուող չը գտայ, մնացի տխմար, մնացի,
Գեղեցիկ Յովսէփի պէս, մնացի անհայր, մնացի,
Խղճալի որբերու պէս, մնացի անմայր, մնացի,

Անարգ թշնամու խօսքերը, մէկ անգամից ծակեց սիրտս,
Անունիս արատ բերաւ, վարագուրով փակեց սիրտս,
Վայրախօս համբաւներով, զուր տեղը մորակեց սիրտս,
Բաղդն էլ մէկ կողմից հազար ցաւով պատեց սիրտս,
Այնուհետեւ ողջ կեանքումս երբէք չը խտակեց սիրտս,
Մոլորուած ոչխարի պէս մնացի չուար մնացի։

Իմ սխալս ուղղելով Տէրը վերաս անձրեւ բերեց,
Նոր ծաղկած ծառի նման կեանքիս բող-բոջ տերեւ բերեց,
Ուժերս նորոգելու կարմիր—փայլուն արեւ բերեց,
Աշխարհի մէջ թռչելու թռչունի նման թեւ բերեց,
Բայց բաղդը նախանձելով արեւս մութ ու սեւ բերեց,
Մինչ ի մահ բաղդի ձեռքին մնացի աւար մնացի։



Թող մշտապէս օրհնեալ լինի, Արարիչիս բարի կամքը,
Որ հայրաբար տարած է միշտ, ինձ վերայ իւր խնամքը,
Երանի, մարդուս լինին, թշնամի իւր բարեկամքը,
Աստուած անպակաս անէ, մեր միջից բարի անդամքը,
Ցիգահըս խնդրում է որ, հեռու գնան չարակամքը,
Ըստորում աղքատ ու խեղճ, մնացի դադար մնացի։

## 54 ԳԱԶԷԼ ՍԷՄՄԱՅԻ.

Անձս վառուեց կրակի պէս, բժիշկ, ինձի պատասխան տուր,
Վառուեց կեանքս կրակի պէս, այս բողոքիս դատաստան տուր,
Քաղեց ողջ անդամներիս մէջ, եղած կեանքս մի մազի պէս,
Չկայ ազատուելու հնար, իմ ցաւիս դեղ ու դարման տուր։

Զօր ու գիշեր մութ մնալով, մեղքիս ձեռքից կը տանջուիմ,
Մեղքս թօթափելու համար, տար մի լեռ տեղ քաւարան տուր,
Սաստիկ կը չարչարէ անձս, այս ցաւն ինձի գազան եղաւ,
Խելագար եղայ ձեռքիցը, դու իմ անձիս պահապան տուր։

Ծնունդ ունեցողը պէտք է, մահանալ՝ աշխարհից գնալ,
Բողոքող Ցիգահուս անձի համար մի լայն գերեզման տուր։

## 55 ՍԷԼԻՍ-ԳԱԶԷԼ.

Ունենամ աշխարհի մէջ ես, բարի վիճակ ունենամ,
Տէրոջը Սուրբ շնորհքով, երգեր լիշատակ ունենամ,
Անցաւոր աշխարհի մէջ, մարդը ինչ է, որ պարծենայ,
Դէպի երկինք գնալու, բարի նպատակ ունենամ։

Վերջապէս այս աշխարհը, մեզ սեփական տուն չի լինի,
Հանդերձեալ կեանքի համար, պէտք է ես կտակ ունենամ,
Երկնային բոլոր լոյսը, չէ աշխարհին արեւի պէս,
Իմաստուն կուսանաց պէս, ձեռքիս վառ ճրագ ունենամ.

Մարդու ընտիր աղօթքը, ես երկինքին սիւն եմ ասում,
Ցիգահին եմ Արարչէս, սուրբ սիրոյ տոմսակ ունենամ։

## 56 ԳԱԶԷԼ ԴԻՒԱՆԻ

Թէ սիրելուս մօտ կերթաս, սիրոյ նամակս առ գնայ,
Աչքերէս անձրեւի պէս՝ թափած վտակս առ գնայ,
Իրան տուած սուրբ սէրը, կ'խայթէ սիրտս մշտական,
Ինչ սիրով որ սիրել եմ, իմ նպատակս առ գնայ։

Տեսնո՞ւմ ես, որ նորանից, այսքան սուրբ սէր պահանջում եմ,
Ուրեմն շտապէ շուտ, սիրոյ մուրհակս առ գնայ,
Ինձանից բարեւ արա, թէ պարտքդ մոռցար պատուական,
Թիթեռի պէս վառւում եմ, այրող կրակս առ գնայ.
Ֆիզահուս չնչին ընծան, տար, մօտեցուր սիրեկանիս,
Կարկաչող քաղցր երգող, նախշուն թութակս առ գնայ։

## 57 ԵՐԳ ԾՆՆԴԵԱՆ

Ամեն տարի այսօր հասնիք,
Ձեզ շնաւոր ծնունդ լինի,
Իբր հոտաւէտ ծաղիկ բուսնիք,
Ձեզ փառաւոր ծնունդ լինի։

Աստուած տայ ձեզ աջողութիւն,
Բարով հասնիք սուր Յարութիւն,
Ունենաք վեհ արտօնութիւն,
Ձեզ լուսաւոր ծնունդ լինի։

Սուրբ դրախտին անտառ լինիք,
Պտղաբեր կենաց ծառ լինիք,
Փրկչին հարազատ գառ լինիք,
Ձեզ զօրաւոր ծնունդ լինի։

Ֆիզահն է ձեզ հաստատ ընկեր,
Սուրբ սիրով կեանք վարէք ազատ,
Որդիքիդ լինին հարազատ,
Ձեզ բաղդաւոր ծնունդ լինի։

## 58. ԹՕՓԽԱՆԱՅ ԴԻՒԱՆԻ

Սիրովդ տոչորվում եմ, աղունիկս ինձ մօտ արի,
Չէ՞ որ ինձ չարչարում եմ, անուշիկս ինձ մօտ արի,



Այսքան ամ է թողել ես տրտում, ցաւալի ինձի դու,
Որտեղ լինիս, քեզ կը գոչեմ, անգրանիկս ինձ մօտ արի։
Բա՞ւ է մնամ խղճալի, գոչում եմ ճանապարհդ սպասելով,
Գովելի անուան տէր ես, երջանիկս ինձ մօտ արի,
Վառվում եմ ու էրվում եմ, բաւ է ինձ տանջես ով սիրուն,
Մամիկոնեան ցեղից եմ, Նուշանիկս ինձ մօտ արի։
Թէպէտ քեզ պէս սիրուններ ես շատ կ'ճարեմ ինձ համար,
Ես Ֆիզահի երգիչն եմ գեղեցիկս ինձ մօտ արի։

## 59. ԻՄ ՋՈՒԹԱԿԻՆ

Մայրդ փայտ է, հայրդ սղոց ու ուրագ,
Վրայիդ լարերն է հաստ, հաստ, հաստ միջակ ու բարակ,
Աստուած տացցէ քեզի ուրախ ժամանակ,
Խօսիր, սիրուն ջութակ, խօսիր, խօսիր, խօսիր թութակի նման 1
Ձայնդ քաղցր հանիր, հանիր, հանիր սօխակի նման: 2

Քաշիչդ որ չլլի, դու հէչ ձայն չունիս,
Էլ ինչ ուրախութիւն խղճուկ տկարիս,
Երբ ձայնդ դուրս եկաւ, այն օրն է մայիս,
Խօսիր, սիրուն ջութակ.... ևն....

Մանկութենէ դու ինձ եղար պարտական,
Իմ տեղակս քեզի տարան դատարան,
Տաւիղն եղաւ իսկ քու անձիդ պահապան,
Խօսիր, սիրուն ջութակ.... ևն....
Առանց քեզի ես մի ուրախ օր չունիմ,
Գիտեցիր որ գիշեր, ցերեկ, զօր չունիմ,
Քեզ այսքան սիրելով, ոչինչ նոր չունիմ,
Խօսիր, սիրուն ջութակ... ևն....

Աստուած տայ աշխարհին միշտ ուրախութիւն,
Որ ես ու դու գտնենք լաւ աջողութիւն,
Ֆիզահըս առանց քեզ չունի զօրութիւն,
Խօսիր, սիրուն ջութակ... ևն....

## 60 ՂԷԼԷՆԴԷՐԻ ՄԻՒԽԷՄՄԷԶ

Ո՞ւր ես, սիրելիս, փնտրում եմ ես քեզի յարաժամ,
Թէ ինձ կը սիրես, ճշմարիտ սէր բանցուր միանգամ,

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել նշեալ տողերը.

Քեզ պէս սիրունին գաղտնի կերպով պէտք է խորհուրդ տամ,
Բան է, սիրելիս, տանջում—սիրոյդ հետը ման գամ.
Դրկած նամակդ ձեռքս առնելով, կարդամ ու միշտ լամ, [1]
Սիրոյդ պայմանին սպասում եմ անդադար ամէն ժամ։ [2]

Խիստ վատ աւուր մէջ դու թողիր, հասիր սիրեկանս,
Հոգիս ինձնից բաժանեցիր, կարմիր սիրականս,
Խաղաղ սրտիս մէջ դու կրակ ձգիր սիրականս,
Անպաշտպան եմ ես, արի ինձ գտիր սիրականս....

Առանց քեզի աշխարհի մէջ զուր եմ մնացել ես,
Քաջ սէրդ քաշելով, արդեօք ո՞ւր եմ մնացել ես,
Ալէկոծ ծովի նման կապոյտ ջուր եմ մնացել ես,
Ե՛կ, օգնեա ինձ, մտքովս կոյր եմ մնացել ես....

Սիրովդ տառապում եմ, դու մէկ լոյս տուր ինձի,
Անձս չորացաւ, սիրելիս, դու մէկ բոյս տուր ինձի,
Աշխարհի մէջ դու մէկ ընտիր, հոգի-կոյս տուր ինձի,
Խաւար մտացս դու մէկ երկնային լոյս տուր ինձի....

Այսքան խնդրում է Ֆիզահը, երանդ նուիրէ ինձ,
Աղաչում եմ, ո՛վ սիրուհիս, տաղանդ նուիրէ ինձ,
Ինչ պարգեւ որ ինձ տալու ես, դու անդ նուիրէ ինձ,
Վերջի վախճանիս մի անմահ աւանդ նուիրէ ինձ....

## 61 ՍՈԽԱԿ

Առաւօտուայ արշալուսին,
Երգում ես անուշիկ սոխակ,
Կարմիր վարդն է քոյ ամուսին,
Դու խօսէ, քնքուշիկ սոխակ։

Դու վարդի սիրոյն ես տարուած,
Նորա համար ես մոլորուած,
Ինչո՞ւ ես այդքան գրաւուած,
Երբ չունիս նմուշիկ սոխակ։

Վարդի բացուելուն կարօտ ես,
Քուն մի լինիր, բացուելը տես,
Որ տերեւներէն հոտոտես,
Ման արի զգուշիկ սոխակ։

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել նշեալ տողերը։



Ֆիզահն եմ, քեզ գովեմ ձրի,
Աստուած խորհուրդդ կատարի,
Զգոյշ կաց որ քեզ չը խրի,
Վարդենու սուր փշիկ սոխակ։

## 62 ՔԵԱՐԱՄԻ

Մէկ ժամդ ինձ համար, հազար օր դառաւ,
Արի՛, սրտիս սիրականը, ո՞ւր ես դու.
Սիրոյդ համար սիրտս է մնացել ծարաւ,
Արի՛, սրտիս պատուականը, ո՞ւր ես դու։

Դու ինձ մի՛ մոռանայ, շուտ արի կեանքս,
Իմացիր ցաւերըս ու հանգամանքս.
Որ զուր չանցնի մանկութեան աշխատանքս,
Արի՛, սրախս գանձարանը, ո՞ւր ես դու։

Ֆիզահն եմ այսքան օր քու սէրդ քաշող,
Ճանապարհդ սպասող, սրտիկս մաշող,
Արտասուքս հեղաւ, ինչպէս մաքուր ցօղ,
Արի՛, երկնից ծիածանս, ո՞ւր ես դու։

## 63 ԹԻԹԵՌ

Քու սէրդ սոխակից շատ է,
Կրակի սիրահար թիթեռ,
Գիտեմ որ սէրըդ հաստատ է,
Եղել ես նետահար թիթեռ։

Սոխակի պէս սիրէ ծաղիկ,
Սէր քաշէ ինչպէս աղունիկ,
Մի հագնիր կրակէ շապիկ,
Դու իբր խելագար թիթեռ։

Ջուր տեղը կեանքդ կմաշես,
Կրակով անձդ կխաշես,
Այդքան սէր թէեւ կը քաշես
Բայց չես դու բարեբար թիթեռ։

Խելքի արի, կրակն ատէ,
Ջուր տեղ մեռնելը շատ վատ է,
Ֆիզահուս խօսքին նկատէ,
Նա չէ քեզ չարալար թիթեռ։

## 64. ԱՇԽԱՐՀ

Արևն ու լուսինը տեղից չի խախտի,
Աշխարհը կդառնայ անիւի նման,
Ինձ նման մարդիկն են մնում կէս բաղդի,
Մըջիւնը մեծնում է արծիւի նման։

Աշխարհը մի շրջող նաւ է մեզ համար,
Միշտ որոգայթ բերող ցաւ է մեզ համար,
Լցուող ու դատարկուող գաւ է մեզ համար,
Ծնուող, վաղճանողն է անթիւի նման։

Շատ մարդիկ աշխարհից կարօտ մնացին,
Մարդն է մէկ ծառ, աշխարհը կտրող կացին,
Մահի ձեռքից շատ մարդիկ դառն լացին,
Ֆիզահուս կեանքն է խուիւի նման։

## 65. ՔԵԱՐԱՄԻ

Մէկ օգնական չեղար ու ինձ չօգնեցիր,
Չը թողիր ոստերիս մի տերև, բա՛ղդս,
Կեանքիս պատմութիւնը բաց ու ընթերցիր,
Աչքիս փտակն արիր դու անձրև, բա՛ղդս։

Դու չեղար համեմատ ինձի հետ ընկեր,
Չը թողիր երեսիս մարդկային պատկեր,
Զօրս խաւար անցաւ, գիշերս-գիշեր,
Կտրեցիր ինձանից արևը, բա՛ղդս։

Ասա՛, քեզի ինչ որ տալիք եմ, ես տամ,
Իմ պարտքիցս ազատուիմ ու ազատ ման գամ,
Մի ուրախ օր ճարեմ, փոքր ինչ խնդամ,
Ֆիզա՛հն եմ, չեմ ուզում օրս սև, բա՛ղդս։

## 66. ԿՌՈՒՆԿ

Ձայնդ սիրուն ու շատ անուշ երգող ես,
Արի՛, մեր աշխարհը կապուտիկ կռունկ,
Ձագիկներդ դու ամեն տեղ ղրկող ես,
Երկիրները ժուռ գալող խատուտիկ կռունկ։

Ունե՞ս արդեօք մեր աշխարհէն դու խապրիկ,
Կամ թէ հետդ բերե՞լ ես ինձ նամակիկ,
Այժմ չեմ ես թոթովախօս մի մանկիկ,
Ճանաչի՛ր, աշխարհն է վաղանցիկ, կռո՛ւնկ։



Երկնքի երեսին կը թռչես արագ,
Փետուրներդ սև են, ոտքերդ բարակ,
Հայրենիքէս եթէ բերել ես նամակ,
Տուր Ֆիզահուս ընծայ, երջանիկ կռունկ։

## 67. ՂԵԼԵՆՏԵՐԻ—ՄԻԽԵՄՄԵՋ

Արի՛ սիրելիս, իմ սիրոյ ընկերն եկաւ անցաւ,
Ափսո՜ս, մանկական օրերիս գիշերն եկաւ անցաւ,
Կամ ինձ մաշող լուսատու պատկերն եկաւ անցաւ
Գիտցի՛ր պատուելի, թշնամու սուսերն եկաւ անցաւ,
Աչքիս լողստու լուսեղէն լապտերն եկաւ անցաւ, 1,
Սրտիս դրդիռն ու ցաւալի ստուերն եկաւ անցաւ։ 2,

Մերկացած եմ ես, լուսեղէն հագուստս, ո՞ւր ես դու,
Ժամս մերձեցաւ, հոգեկան դալուստս, ո՞ւր ես դու,
Մտքով տկար եմ, ուսումով հարուստ, ո՞ւր ես դու,
Միշտ փնտռում եմ քեզ, թանկագին կորուստս, ո՞ւր ես դու։

Ես քու Ֆիզահդ եմ շուտ հասիր, տկար մնացի ես,
Անկիրթ, անուսում, յետադէմ—յիմար մնացի ես,
Վիճակով անբաղդ, գործքովս անճար մնացի ես,
Վայրերի տեղերում, իբր չոր քար մնացի ես.....

## 68. «ԽԵՒԻՆ ԽՐԱՏ, ՍԵՒԻՆ ՍԱՊՈՆ...»

Խևին հազար որ խրատ տաս,
Կասէ քեզնից գիտնական եմ,
Չի գիտեր օգուտ ու վնաս,
Կասէ ես ինձ պահապան եմ։

Աշխարհումը անուն չունի,
Գիշեր ու ցերեկ քուն չունի,
Թէ և մէկ փոքրիկ տուն չունի,
Կասէ հիւրի օթևան եմ։

Վառարանում հուր չի ճարուի,
Գուբերումը ջուր չի ճարուի,
Քարղանում ապուր չի ճարուի,
Կասէ ես մի լի սեղան եմ։

Ինքը տկլոր առանց հալաւ,
Կը նմանի աղքատի հաւ,
Երբէք չունի բարի համբաւ,
Կասէ սիրոյ, սիրաբան եմ։

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել նշեալ տողերը.

Ջափ չունի իրան բերանը,
Սուրբ չի պահէ պատուիրանը,
Չի տեսներ աչքի գերանը,
Կասէ թէ ես վարժարան եմ։

Քիթն է ծուռ կարթի նման,
Դէմքը թոռմած վարդի նման,
Խօսք չի խօսիր մարդի նման,
Կասէ ճիշտ խօսող բերան եմ։

Երեսն է միշտ սև մրի պէս,
Ունքերն է քլտի թրի պէս,
Մտքովը մոլոր կուրի պէս,
Կասէ, Ցիզա՛հ, բառարան եմ։

## 69. ՍԱՂՐ–ԴԻԽԱՆԻ

Արեգակից գեղեցիկ ես, կերպդ է լոյս սիրուհի,
Հոտով բալասան ծաղիկ ես, դրախտի բոյս սիրուհի
Ամէն մի գեղեցկուհուց դու զովական ես պատուական,
Ինչո՞ւ համար սև ես հագել, դարձեալ ես կոյս սիրուհի։

Այսքան ամ է քու սիրոյդ, կրակի մէջ այրվում եմ,
Կարող չե՞ս ինձ պէս խեղճին տալու մի յոյս սիրուհի,
Վարք ու բարքդ մի փոխիր, դու զովասանք շատ ունիս,
Չէ՞, դու իմ նազելիս ես, և աչքերուս լոյս սիրուհի։
Խեղճ Ցիզահդ եմ ցաւալի, միշտ քեզ կոչում եմ, ո՛վ սիրուն,
Անօգնական խղճուկ եմ, եղիր խրախոյս սիրուհի։

## 70. ՀԻՃՐԷՆ ՔԵԱՐԱՄԻ

Ահա որդիք ես ձեզանից հեռացայ,
Բռնուաւ իմ բաժին արեգակ աշխարհ,
Ցաւն մեծ էր, վասն այն ես ձեզ մոռացայ,
Առնուաւ իմ բաժին լուսնիակ աշխարհ։

Այս աշխարհը մարդու ցաւի տուն է միշտ,
Կը թօթափէ մարդկանց վերայ ցաւ ու վիշտ,
Երանի արդարոց, որ գործերն է, ճիշտ,
Պառռուաւ իմ բաժին մէկ մուրհակ աշխարհ։

Անկողինս ձեզի թողի յիշատակ,
Բարի ժամի ինձ պատահեց հրեշտակ,
Մարդը ունայն աշխարհին է միշտ փափագ,
Ծարաւած Ցիզահուն մի դորակ աշխարհ։



## 71. ՎԱՐԴ ԿՕՇԻԿ, (Թարգմանութիւն տաճկերէնից)

(Տղայի և աղջկայ բերանից)

Աղջիկ — Մեր տանը մէջ քնող տղայ,
Կարմիր խնձոր ծաղող տղայ,
Վարդ կօշիկս գտնող տղայ,
Տղա՛յ, ղրկէ վարդ կօշիկս,
Վարդ կօշիկս, վա՛րդ կօշիկս, 2
Վարդից գեղեցիկ մաշիկս։ 1

Տղայ — Ձեր տան մէջը քնել չեմ ես,
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ,
Վարդ կօշիկդ, վարդ կօշիկդ, 3
Վարդից գեղեցիկ մաշիկդ։ 4

Աղջիկ — Լաւ օրս եղաւ ախ ու վախ,
Կորցուցի կօշիկս, աւա՜ղ,
Հայի աղայ հոգուդ մատաղ,
Տղա՛յ, ղրկէ վարդ կօշիկս....

Տղայ — Որ մօտս չէ, ո՞ւրտեղից ճարեմ,
Ըլլի, խօսքդ կը կատարեմ,
Ազնի՛ւ աղջիկ, հոգի՛դ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ....

Աղջիկ — Ես մի անթառամ ծաղիկ եմ,
Անուշ երգող աղունիկ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղա՛յ, ղրկէ վարդ կօշիկս....

Տղայ — Ես գիտեմ դու անդրանիկ ես,
Սիրովդ ինձի մօտիկ ես,
Հասակովդ էլ փոքրիկ ես,
Իմ մօտս չէ՛, վարդ կօշիկդ....

---

1—2 Ամենայն տանց վերջում կրկնել վիշեալ տողերը։
3—4 Ամենայն տանց վերջում կրկնել վիշեալ տողերը։

Աղջիկ — Մի՛ մնար ինձի պարտական,
Աղջիկ եմ տաս-չորս տարեկան,
Ես կլինիմ քեզի սիրական,
Տղա՛յ, ղրկէ վարդ կօշիկս....

Տղայ — Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,
Կամիս տամ հազար դահեկան,
Եթէ կ՚լինիս ինձ սիրական,
Ծարելու եմ վարդ կօշիկդ....

Աղջիկ — Մնացել եմ սուգ-սևաւոր,
Գործքովս չեղայ փառաւոր,
Խեղճ ցիզահն է մեզի քաւոր,
Տղա՛յ, ղրկէ վարդ կօշիկս....

Տղայ — Ինչի՞ կը մնաս սգաւոր,
Գործքովդ եղիր թագաւոր,
Եթէ ցիզահն է մեզ քաւոր,
Իմ մօտս է վարդ կօշիկդ....

## 72. ՄՏԱՄՄԱ (պահուստ—հանելուկ.)

Ո՛վ գիտնական, պահուստս գիշեր ու ցերեկ բանում է,
Իրան սիրահար մարդկանց ստիպմամբ գործի գնում է,
Բոլորովին պահուստս վախ չունի մեր այս աշխարհից,
Մէկի կայքը խլելով, միւսի տունը տանում է։
Իմ պահուստս մի ծառ է, տերև ունի, արմատ չունի,
Տերևը որ հաւաքես, գումարը մէկ տեղ մնում է,
Երկու հարիւր քառասուն չորսից աւել համար ունի,
Բայց սրա հեղինակը մարդու ջերից գանձ հանում է։
Քսան և չորս մարդ ունի—աղջիկ, տղայ և ծերունի,
Ծերունուն իւր մահակով, քանի ծեծ տաս հաստանում է,
Անդամ ունի, ոտք չունի, աշխարհի մէջ ման է գալիս,
Ճարպիկ օրիորդ ունի, իրան թելիկը մանում է։
Իմ պահուստս էլ ինձ նման, մօրից տարաբաղդ ծնուել է,
Խեղճ ցիզահու բաղդի պէս, ամեն րոպէ քնում է.
(Այս հանելուկի անունը 12 գրով կը կապուի, վանկն էլ 4—է,
Հաշիւն է 19,4,11։ Ով որ գտաւ մի երգ կընծայեմ)։

## 73. ԴԸՄԻԹԱՆ

Ձեզ պատմեմ իմ տեսած բոլոր օրերս,
Չը տեսայ խնդում ու բարի ժամանակ,



Գիշերի պէս անցան բոլոր զօրերս,
Իմ մէկ ցաւս եղաւ շատին օրինակ։
Ութն ամաց մէջ էի, մայրիկս մեռաւ,
Սրտիս սիրականը ձեռքիցս թռաւ,
Մի օր կուշտ էի տաս օր ծարաւ,
Աչքերէս պակաս չէր արտասուաց վտակ։

Հայրիկս ամուսնացաւ, առաւ մի այլ կին,
Աստուած առնի անգութ մարդու վատ հոգին,
Խնամք չունէր նա իմ վերաս արտաքին,
Հացի տեղակ կուտար, ծեծ-քաշ ու ապտակ։
Հայրիկս էր կայքով փողալի-հարուստ,
Չէր ուզեր որ անէր մեզ համար հագուստ,
Մեր հագածը, իբրև գնում էր կորուստ,
Չէր ասեր թէ ունիմ խղճուկ-որբ զաւակ։

Երեք տղայ մայրս իր հետը բերեց,
Խնդաց, ուրախացաւ ու լաւ կեանք վարեց,
Անշէջ հրով ինձի այրեց ու գաղեց,
Քաշում էի մի անտանելի կրակ։
Վատ օր շատ քաշեցին խեղճ քոյրիկներս,
Ապտակով թառամաւ իմ լոյս պատկերս,
Գլխիս զարկելով կուրացաւ աչքերս,
Չէի տեսնում սև ու կարմիր, սպիտակ։

Խորթ եղբայրս եղաւ մեր տանը ծաղիկ,
Մայրս էր բերել մէկ մանչ, երկու հատ աղջիկ,
Նրանք էին հօրս համար անդրանիկ,
Վարում էին լաւ կեանք, փարաւոր վիճակ։
Ինձ տուին մի երգչի մօտ աշակերտ,
Սազ ածել սորուեցուց ու արաւ վարպետ,
Նա էր ինձի ուսում տուող վարժապետ,
Որից ես սորուեցայ տաւիղ ու ջութակ։

Գոչում էի սուրբ Յովհաննէս—Մկրտչին,
Բարեխօսէր ինձ համար Յիսուս—Փրկչին,
Իմ աչքերիս լուսոյ նշոյլ հասուցչին,
Ժուռ կուգայի ոտաբոբիկ, անգտակ։
Երազումս տեսայ մի քրդի զինուոր,
Ալ շորերը հագին, ինքը փառաւոր,

Ասաւ, «Յովհաննէսն եմ Յիսուսին քաւոր,
Գուռս արի, որ տեսնես լոյս արեգակ»։

Ծնողացս իմ երազս պատմեցի,
Խորթ մօրս սրտի մէջ վիշտ, կրակ լցի,
Հայրիկս ասաւ, մի ամիս դու լուռ կեցի,
Մինչ քեզ համար առնեմ մի փոքր աւանակ։

Ինձ ճանապարհ գցեց ուխտաւորի հետ,
Ընկեր եղայ բազում ձիաւորի հետ,
Ճանբան աչքս բացուեց, տեսայ Մուրատ
գետ,
Աչքիս երևում էր ճանբան ծուռ-շիտակ։

Գոչում էի ո՛վ սուրբ, ես քեզ եմ ծառայ,
Թիթեռի պէս սիրոյդ կրակով վառայ,
Հաւատով խնդրեցի, աչքի լոյս առայ,
Աչքերուս լոյս տուեց, ինձի յիշատակ։

Սաղացան աչքերս, դարբին եղայ ես,
Անձիս վերայ աւելի ցաւ բերի ես,
Եղել էի իմ կամքովս թերի ես,
Շինում էի խոփ կացին և ուրագ։

Այդ միջոցին իմ հայրիկս վաղճանաւ,
Հօրս մեռնելովը ունեցայ մեծ ցաւ,
Մնացի խեղճ, դառն աղքատ, անհալաւ,
Թշնամիքս եղան ինձ հետ հակառակ։

Մեր կայքով մայրիկս մեզ չը շահեց,
Հօրս բոլոր գանձը գողացաւ-պահեց,
Մեր հայրական հացը մեզնից խնայեց,
Զրկելով չը տուեց ինձի մի ստակ։

Երկու քոյրիկս ու ես եղանք ցիր ու ցան,
Նրանց թողի անտէր, փախայ Երևան,
Բարեկամքս չեղան մեզի օգնական,
Շրջում էի անգործ ու առանց վաստակ։

Շրջում էի շատ անգամ ես անկօշիկ,
Գլուխս բաց, ու մարմինս անշապիկ,
Յանկարծ սիրտս դարձաւ դէպ իմ հայրենիք
Վերջն եկայ Ալեքսանդրապօլ քաղաք։



Ամուսնացայ ես Ալէքսանդրապօլու մէջ,
Կրակ ձգի իմ սրտումս ես անշէջ,
Գրպանումս մի ստակ չէր ճարուի հէչ,
Գնացի իմ ամուսնուս հետ ես պսակ։

Պսակուեցանք, դարձայ ընկերիս գերի,
Մի հարուստից տասն րուբլի պարտ արի,
Թել ու մաստաք առայ չարչութիւն արի,
Միշտ կերթայի Դիրաքլար ու Քեափանակ։

Չարչութիւնով ճարեցի գիւղում անուն,
Գիշեր ցերեկ աչքերիս մօտ չեկաւ քուն,
Աշխատելով վերջն առայ ինձ մէկ ֆուրգուն,
Բեռը բարձած տանում էի ես արագ։

Առայ գերդաստանս Կարին գնացի,
Կարօտ չէինք ոչ ջրի և ոչ հացի,
Միայն հայրենիքիս կարօտ մնացի,
Կարինում ես տարայ ֆուրգունն օրինակ։

Կարինի մէջ ինձ լաւ վիճակ ճարեցի,
Ասի աղքատութեան, դու մէկ կողմ կեցի,
Շատ մարդկանց բեռ դէպի Պոնտոս կրեցի,
Բաղդս աշխարհին եղաւ մի կտրող դանակ։

Երեք ֆուրգուն պարադիւք ես առայ,
Աղքատութեան վատ օրերը մոռացայ,
Ափսոս, քոյրիկներէս ես շատ հեռացայ,
Բայց միշտ կուղարկէի նրանց սիրոյ նամակ։

Շատ մարդիկ կասէին թէ լաւ տղայ է,
Ինքը խոնարհ, կարծես իսկ աբեղայ է,
Շատ-շատերից առատաձեռն աղայ է,
Վարք ու բարքով է մի փայլուն արեգակ։

Մինչև երկու տարի լաւ օր ունէի,
Վիշտ ու հոգսեր ամենևին չունէի,
Ամեն օր, ամեն ժամ, նոր միտք ունէի,
Մտածելով՝ որ անունս է իբրև ակ։

Կարին եկաւ մեզ տեսութեան զօքանչս,
Գրկելով սիրում էր Կարապետ մանչս,
Հասկացայ, որ նա է իմ չար ճանանչս,
Տուեց ինձ ձեռքովը խեղճութեան բաժակ։

Ընկերիս հետ, երբ ղօքանչիս ղրկեցի,
Աղքատութեան լուծը դարձեալ գրկեցի,
Դառն արտասուօք ողջ մարմինս ներկեցի,
Ջօքանչս իսկ եղաւ գործիս հակառակ։

Նորանից յետ մեծ ցաւի մէջ ընկայ ես,
Ֆուրգուններիս մի լաւ գնող գտայ ես,
Ասի Աստուած, դու ինձ գողերից պահես,
Անտառի մէջ ինձ հանդիպեց աւազակ։

Անգութ քրդերն ինձի շուտ մերկացուցին,
Մահու գաւաթներով ինձ ջուր խմցուցին,
Շատ ծեծելով վերջը ինձի լացուցին,
Տարան ունեցածս ինձի թողին դարտակ։

Եկայ մեր քաղաքը, հասայ մերկաբաց,
Մէկ աչքս էր ծիծաղ ու միւսը լաց,
Որովհետեւ թշնամիս վրաս խնդաց,
Նորանց խօսքը սրտիս եղաւ մի նիզակ։

Երգչութիւնը ինձ արհեստ էր բնական,
Միտք արի որ, լինիմ ես աստանդական,
Քնարս առայ, գնացի դէպ Տաճկաստան,
Որ բարեկամքս ինձի չանեն խայտառակ։

Մինչեւ Ամասիայ քաղաք գնացի,
Երեք դաւրիշի մօտ ես ծառայեցի,
Իննը ամիս նրանց մօտը մնացի,
Տեսան որ շատ ժիր եմ ու շատ ընդունակ։

Դաւրիշները իմ բաղձանքս կատարին,
Ինձի համար հազար հնարներ ճարին,
Երգչութեան անունս Ֆիգահի դրին,
Ինձ կոչեցին բանաստեղծ ու հեղինակ։

Խորհուրդ արին, ինձի ղրկեցին Պօլիս,
Իրանց կեանքից աւելի կսիրէին զիս,
Ինձի համար դարձան նրանք վեհ-Մասիս,
Որոնց ծաղկին էի մշտապէս փափագ։

Պօլսու մէջը կեցայ իննը ամսու չափ,
Մէկ ժամ չէի մնար անգործ ու պարապ,
Ումնից ինչ ուզէի, կուտային շտապ,
Եղել էի ինչպէս երգասաց սոխակ։



23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929

Յետ դառնալով եկայ իմ հայրենիքս,
Հոտոտեցի իմ նազելի ծաղիկս,
Կենդանի էին ընկերս ու աղջիկս,
Իմ կեանքս էլ եղաւ հեքեաթ ու առակ։

Բարի միտք ճարեցի սրտիս մէջ դանդաղ,
Այժմ ես ման կուգամ մտքով կաղ 'ի կաղ,
Մի փոքր լոյս ընկաւ երեսիս ծիծաղ,
Քանզի որդիք ունիմ ես անշամանդաղ.

Ինձի սէր պարգեւող Աստուծուն մատաղ,
Ածում եմ ջութակս ու երգում եմ խաղ,
Որովհետեւ կեանքս է հանգիստ ու խաղաղ,
Կայ Ֆիգահուն Փրկիչ Որ Էնն միայնակ։

## 74 ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՒ ՍԵՂԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ

Արժան է գովբանել պարոն կառավարչին
Պէտք է մենք ընկերութեամբ խորհուրդ տանք իւր գրչին,
Եւ գովելով գոհանանք միաբերան Փրկչին,
Աղերսենք մենք սուրբ հոգով մեր բաղձանք լեցուցչին
Ինչ որ կուտէք փառք տուէք միք պտրել շատ ու քչին։

Աստուած տացէ Սուրբ շնորհք որ ձեզ լաւ կառավարէ,
Եւ բնական ձրգովը բարի խօսքեր հնարէ,
Որ ընդհանուրդ ասէք մեր թամատեն՝ ճարտար է,
Թանկագին գաւաթները Սուրբ սեղանին մէջ շարէ,
Առաջարկէ կենացը Օհանէս Մկրտիչին։

Այստից աւել արժան է Կառավարչին գովասան,
Կառավարչի ընկերքը մէկ մէկից պատուական,
Ամեն կենաց խմում են խօսք են խօսում հիմնական,
Ծննդական շնորհքով և միտք ունին բնական,
Ուրախ զուարթ խնդալով նայում են ձախ ու աջին։

Կառավարիչ միտք ճարէ քեզի ուղափառի պէս,
Քու մաքուր խնճոյքիդ մէջ եղիր դու հեզ գառի պէս,
Բարոյական խօսք խօսեր ընկերտանցդ ճառի պէս,
Ծխէ բարոյական ֆոտ դու փրկչին փուրվառին պէս
Միտք բերելով յիշեցէք որբ Ֆիգահի երգչին։

## 75 ՉՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ընկեր՝ չունիմ մէջս տաղանդ
Թէ ես չունիմ դու էլ չունիս,

Երակիս մէջ ջանք ու եռանդ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Վատ մարդու հետ հաշիւ չունիմ,
Սիրամարգեմ արծիւ չունիմ,
Ընկերի մօտ պատիւ չունիմ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Վիճակս վատ է մի անգամ,
Ցաւով լցուած եմ հառաժամ,
Ինձի օգնող լաւ բարեկամ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Ես քուն չունիմ զօր ու գիշեր,
Չունիմ մի ցաւալի ընկեր,
Եւ հեռատես պայծառ աչքեր,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

Ֆիզահն եմ ուսումով աղքատ,
Օգնող չունիմ ինձ հարազատ,
Այլերն ունին ոսկի արծաթ,
Թէ ես չունիմ դու էլ չունիս։

## 76 ՎԱՏ ՄԱՐԴ

Ով պատանի անկիրթ անմիտ խելագար,
Թագաւոր ես դառել դուն քեզի քեզի,
Միտք ճարէ քեզ, որ դուն լինիս հեզիկ գառ։
Դատաւոր ես դառել դուն քեզի քեզի։

Նիզակ խօսքով մարդոց սիրտը ծակում ես,
Սրտի ապակին կոտրում — քակում ես,
Այլոց աջողութեան դուռը փակում ես,
Մեղաւոր ես դառել դուն քեզի քեզի,

Աշխատէ միտք ճարէս անձիդ հարազատ,
Որ փորձանաց տանից դուն լինիս ազատ,
Ֆիզահն տալիս է քեզի բարի խրատ,
Սքաւոր ես դառել դուն քեզի քեզի։

## 77. ԴԻՒԱՆԻ

Թող մնայ իմ անունս այլոց խայտառակ թող մնայ,
Եւ իմ ազգու խօսքերս աշխարհին առակ թող մնայ,
Իմ կարճատես անձովս թափառվում եմ օտար տեղեր,



Անիրաւ բաղդս ինձ վերայ այդպէս հակառակ թող մնայ։
Կան մարդիք որ խելք չունին բաղդովը անչափ խնդում են,
Իմ ապերախտ վատ բաղդս ընկած ծառի տակ թող մնայ,
Չեմ գիտում թէ ուր գնամ կամ ում խօսիմ գաղտնիքներս,
Չեմ ճարէ խորհրդակից բարութեան փափագ թող մնայ,
Իմ երգերս էլ ինձ նման անձով տարաբաղդ ծնուած են,
Անօգնական Ֆիզահու ցաւերը կրակ թող մնայ։

## 78. ՄՈՒԽԱՄՄԷՋ.ՍԻՕՆԻ

Օգնեա՛ ինձ Հայր երկնային Թագաւոր,
Մնացել եմ տրտում տխուր սգաւոր,
Քու անունդ է աշխարհի մէջ փառաւոր,
Գութ-ունեցիր դու մեզ վերայ Թէեաւոր,
Դու ես ամեն մէկիս ընտիր դատաւոր։

Սուրբ սիրովդ իմ անձս կըչարչարեմ,
Քեզ յայտնի է որ ես խղճուկ անճար եմ,
Ուր գնամ որ սիրոյ գաւառդ ճարեմ,
Առանց բժիշկ անտեղուճար տկար եմ,
Տգէտ եմ ես ոչ թէ իմաստ լուսաւոր։

Սուրբ սիրուդ հետ գիշեր ցերեկ լալիս եմ,
Տրտում տխուր աշխարհը ման գալիս եմ,
Ջերմ սիրովդ սրտիս եղը հալում եմ,
Վիշտ ու կրակ իմ անձիս մէջ լըլում եմ,
Իմ եռանդս ինձի չեղաւ բաղդաւոր,

Լաւ օրերս արտում տխուր անցուցի,
Վիշտս մէկ-մէկ ցաւս հարիւր անցուցի,
Արտասունքս բխող աղբիւր անցուցի,
Քու Ֆիզահդ եմ ջանքերս զուր անցուցի,
Իմ բաղդս է անխնամ ու ինձ նենգաւոր։

## 79 ՊԱՐՍԿԱԾ ԵՐԳԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

(տի գոյ եար մանի օլդ.)

Իմ կեանքս իմ սիրեկանինս է,
Ազնիւ ընկեր հոգի ջանինս է,
Իմ վարդս այգեպանինս է,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։

Պատանի երիտասարդ ես,
Սիրով սիրոյս հետ մակարդ ես,

Ես սոխակ եմ դու մի վարդ ես,
Թող ինձ թող ինձ թող քու սէրդ
ինձ սպանէ։

Նպատակդ կատարում ես,
Ուրիշ ընկերներ ճարում ես,
Զուր տեղը ինձ չարչարում ես,
Թող ինձ թող ինձ թող քու,
սէրդ ինձ սպանէ։
Ինձ վերայ սէր բազում ունիս,
Սոխակի պէս խօսում ունիս,
Եւ չափազանց ուսում ունիս,
Թող ինձ թող ինձ թող քու սէրդ
ինձ սպանէ։

Թշնամեաց լուրը լսում ես,
Զուր տեղը ինձ բանբասում ես,
Սպանելու սպասում ես,
Թող ինձ թող ինձ թող քու
սէրդ ինձ սպանէ։
Ցիգահուն պէս անմիտ ես միշտ,
Վատ խօսքը կանես կեանքիդ վիշտ,
Սիրեկան կեանքս քուկդ է ճիշտ,
Թող ինձ թող ինձ թող քու սէրդ
ինձ սպանէ։

## 80. ՉԵՂԱԾ ԲԱՆ

Բնութեամբ հեզ պատանին,
Մեծին հակառակ չի լինիր,
Միշտ սիրող պատմիրանին,
Վարքով խայտառակ չի լինիր։
Ով չը պատուէ իրան հօրը,
Նրան հաց չի տար հգօրը,
Այնպիսի անմիտ աքլորը,
Արծիւ կամ տատրակ չի լինիր։

Ով որ ճանչէ իր համբաւը,
Նա չի տեսնի յանկարծ ցաւը,
Տէսէք ձմռաբեր աղուաւը,
Վարդասէր Սոխակ չի լինիր։
Ցեխի մէջ չի մնար ոսկին
Մարդու անուն է թանկագին,



Ցիգահի գուհար ապաքին,
Լուսին արեգակ չի լինիր,

## 81. ՏՈՒԲԵՒՏ

Ես հիմար թիթեռի նման,
Ընկեր եմ կրակին ու բոցը,
Ցաւ եմ ճարէ ինձ սեպհական,
Մանկուգամ մահի փողոցը։
Մի մարդը որ մայր չունենայ,
Այրանկից եղբայր չունենայ,
Հոգով ցաւող հայր չունենայ,
Կոտրի նրան օրօրոցը։

Պատուած վրան տուն եմ ճարել,
Տրտմութեան մէջ քուն եմ ճարել,
Լոկ Ցիգահ անուն եմ ճարել,
Ցաղթել եմ դատարկ քթոցը։

## 82. ԽԱՅԵԱԼԻ ԴԱՍՏԱՆ

Տա՛ր Աստուած ինձ եռանդ հաստատ յոյս ու սէր,
Իմաստութեան սէրը ինձ սեպհական լինէր,
Ճարէի ես եռանդ խրախոյս սրտիս,
Միտքս ընտիր ձեռքս բնական լինէր։
Ինձ Աստուած ընծայէր խորամտութիւն,
Սողոմոն արքայի պէս իմաստութիւն,
Որ ճարէի իմաստութեամբ բարութիւն,
Ընկերս ինձանից գիտնական լինէր։
Ունենայի ինձ հարազատ զաւակներ,
Բարի համբաւ փառք ու անթիւ վիճակներ,
Մօտս երգող սիրամարգներ, սոխակներ,
Կացարանիս դուռը վարդարան լինէր։

Իմ խրճիթս շինուած լինէր գոհարով,
Լուսամուտը շինէին ողջ անգին քարով,
Ղամպարներ քաշ տայի ոսկեղէն լարով,
Այդպիսի թանկագին օթեւան լինէր։
Սենեակիս չորս կողմը լինէր լի պարտէզ,
Չորս կողմերը ծաղկով լեցուն ապարէզ,
Ցեանողներն ասէին Վէննա ու Պարէզ,
Պարտիզիս պահպանը մրաջան լինէր։

Պարտէզս ունենար անուշահամ ջուր,
Խմողքն ասէին կաթնահամ աղբիւր,
Ակի տեղը լինէր ոսկեղէն եղջիւր,
Գետը Տիգրիսի պէս հիմնական լինէր։
Իմ համբաւս խօսվէր ամենայն մի տեղ,
Բժիշկի պէս տայի ամեն ցաւ ու դեղ,
Անունս յիշէին թէ քաղաք թէ գիւղ,
Բարութիւնս այլերին պատվիրան լինէր։

Աղքատները հարուստից լաւ սիրէի,
Քաղցածներին միշտ հաց ու ջուր կրէի,
Աստուծու Սուրբ պատվիրանը տիրէի,
Առանց պարպելի Սուրբ սեղան լինէր,
Քրտինքովս միշտ ընտիր դատ դատէի,
Քաղցր խօսքերով այլերին խրատէի,
Միշտ գովէի, թշնամոցս չատէի
Քարոզախօս ինձանում բերան լինէր,

Ունենայի ես ընտիր միտք շարունակ,
Հարիւր շտեմարան լիովին թանկագ,
Հազար գանձարանս լիովին ատակ,
Հինգ հարիւր սոմառի չափ կարկենան լինէր։
Ունենայի տասը հազար ջրաղաց,
Քաջ հողագործի պէս ցանէի շատ հաց,
Ասիացոց դաշտը ձեռքովս վարած,
Անչափից յաւելի ինձ գութան լինէր։

Ես լինէի Մամիկոնեան ցեղից,
Հայրս լինէր Վասպուրական գեղից,
Ծաշակէի Վռշտունեաց եղից,
Իմ պապիս անունը քաջ Վարդան լինէր։
Չը պատահէր անձիս վրայ յանկարծ ցաւ,
Ծարէի երջանիկ բարութեամբ համբաւ,
Կարել տայի ինձի ոսկեզօծ հալաւ,
Եւ ձեռքիս օցախիշտ գաւազան լինէր։

Երգով գովասանէ անունդ Ֆիզահ,
Չէ սեպհական կեանքիդ արիւնդ Ֆիզահ,
Հողէն ծնուած, հողն է քու տունդ Ֆիզահ,
Փակուած ու կնքուած գերեզման լինէր։

ՎԵՐՋ